

Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2021թ. փետրվարի 25-ի թիվ 51-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ
«ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս	3-5 էջ
2. Հաղագրություններ	5 էջ
3. Անկախ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ	6-8 էջ
4. Ասֆոֆագիր	9-11 էջ
5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ	12-74 էջ
6. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ	75 էջ
7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	75-78 էջ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի ապրիլի 26-ի
թիվ 9/8 որոշում:

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ Արդարադատության նախարարության
քրեակատարողական ծառայություն:

Հաշվեքննության առարկան

Ֆինանսատնտեսական գործունեություն:

Հաշվեքննության չափանիշները

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք,
«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենք,
«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք,
«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենք, «Գնումների
մասին» ՀՀ օրենք, «Դրամարկղային
գործառնությունների մասին» ՀՀ օրենք,
«Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք,
«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, ՀՀ
կառավարության 15.10.2015թ. թիվ 1182-Ն որոշում,
ՀՀ կառավարության 31.07.2003թ. թիվ 961-Ն որոշում,
ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ
534-Ն որոշում, ՀՀ կառավարության 16.06.2005թ.
«ՀՀ ԱՆ ՔԿ Ծառայության կոմունալ ծախսերի
նորմաները հաստատելու մասին» թիվ 896-Ա որոշում,
ՀՀ ֆինանսների նախարարի մարտի 13-ի թիվ 254-Ն
հրաման, <<Աջակցություն դատապարտյալին>>
հիմնադրամի կանոնադրություն,
քաղաքացիաիրավական հարաբերությունների
շրջանակներում կնքված պայմանագրեր և
կանոնակարգող այլ նորմատիվ իրավական ակտեր:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը 2018թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. մարտի 31-ը ներառյալ:

Հաշվեքննության կատարման ժամկետը 2019 թվականի մայիսի 6-ից մինչև 2021 թվականի մարտի 31: ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 168-Ա որոշմամբ հաշվեքննությունը կասեցվել է, որը վերսկսվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 171-Ա որոշմամբ:

Հաշվեքննության մեթոդաբանությունը Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի համապատասխանության հաշվեքննության գործող մեթոդաբանությունների համաձայն:
 Իրականացվել է համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը: Հաշվեքննության ընթացքում իրականացվել է ստուգում <<Աջակցություն դատապարտյալին>> հիմնադրամում:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի առաջին վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը:

Հաշվեքննության շրջանակներում իրականացված ստուգում Հաշվեքննության ընթացքում իրականացվել է ստուգում <<Աջակցություն դատապարտյալին>> հիմնադրամում:

Ստուգման հիմքը ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մարտի 06-ի թիվ 28-Ա որոշում:

Ստուգման առարկան	«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեություն:
Ստուգման առարկայի չափանիշները	«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենք, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշում, «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի կանոնադրություն, քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված պայմանագրեր և կանոնակարգող այլ նորմատիվ իրավական ակտեր:
Ստուգումն ընդգրկող ժամանակաշրջանը	2018թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. մարտի 31-ը:
Ստուգման կատարման ժամկետը	2020թ. մարտի 16-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 30-ը ներառյալ: ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 168-Ա որոշմամբ ստուգումը կասեցվել է, որը վերսկսվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 171-Ա որոշմամբ:

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ՔԿԾ- Քրեակատարողական ծառայություն
2. ՔԿՀ- Քրեակատարողական հիմնարկ
3. Նախարարություն- ՀՀ արդարադատության նախարարություն
4. Հիմնադրամ-«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի
5. ՍԷԿՏՀ-Սահմանափակումների էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ
6. ՀԾՀ-Հանրային ծառայության համարանիշ

3.ԱՆԿԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Մենք համապատասխանության հաշվեքննության ենք ենթարկել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության և <<Աջակցություն դատապարտյալին>> հիմնադրամի 2018 թվականից հունվարի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ը ընդգրկվող ժամանակահատվածի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ: Ուսումնասիրվել են ծառայության և հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության համապատասխանությունը իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

ՀԱՇՎԵՔՆՆՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Մեր պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք ՀՀ արդարադատության նախարարության և <<Աջակցություն դատապարտյալին>> հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության՝ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխանության վերաբերյալ: Մենք հաշվեքննությունն անցկացրեցինք <<Հաշվեքննիչ պալատի մասին>> ՀՀ օրենքի, Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության ստանդարտների համաձայն: Այդ մեթոդաբանությամբ պահանջվում է, որ մենք հետևենք վարքագծի սկզբունքների պահանջներին և հաշվեքննությունը պլանավորեցինք և իրականացրեցինք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք առ այն, որ քրեակատարողական ծառայության և հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված գործարքների իրականացումը զերծ է էական անհամապատասխանություններից:

Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան հաշվեքննության ապացույցներ մեր կարծիքը հիմնավորելու համար:

ՈՉ ԼԻԱՐԺԵՔ ԵԶՐԱՀԱՆԳՄԱՆ ՀԻՄՔ

- Թվով 85 քրեակատարողական և քաղաքացիական հատուկ ծառայողներ միաժամանակ կատարել են թվով 96 կազմակերպություններում այլ վճարովի աշխատանքներ, որոնց մասով առկա էր սահմանափակումներ <<Քրեակատարողական ծառայության մասին>> ՀՀ օրենքի /հաշվետու

Ժամանակաշրջանում գործող ինկորպորացիա/ 32 հոդվածի 1.1 մասի և օրենքի 51.19 հոդվածի համաձայն:

- Թվով 14 աշխատակիցներ հաշվետու ժամանակահատվածի տարբեր օրերին փաստաթղթերով աշխատանքի մեջ լինելու պարագայում՝ փաստացի անհարգելի բացակայել են աշխատանքից՝ գտնվելով ՀՀ տարածքից դուրս:
- Սննդամթերքի գերակշռող տեսակների դեպքերում առկա է ՀՀ կառավարության 15.10.2015թ. թիվ 1182-Ն որոշման 1.1 և 1.4 կետերի հավելված 1-ով և հավելված 4-ով սահմանված նվազագույն չափաքանակներից էական շեղումներ՝ ինչպես սահմանված չափաքանակներից պակաս, այնպես էլ՝ ավելի:
- Չեն պահպանվել սննդամթերքի մատակարարման պայմանագրերի տեխնիկական բնութագրերով սահմանված մատակարարման վայրերի մասով պահանջները
- Էներգախնայողության աշխատանքների կատարման արդյունքում քրեակատարողական հիմնարկներում ջեռուցման համար սպառվող ջերմային էներգիայի տարեկան սպառումը պետք է նվազեր միջինը 49 %-ով, սակայն 2018թ. էներգախնայողության միջոցառումներ իրականացված քրեակատարողական հիմնարկներում էներգիայի սպառումը նվազել է 44.3%-ով:
- Էներգախնայողության աշխատանքներ իրականացված 6 քրեակատարողական հիմնարկներում էլեկտրաէներգիայի տարեկան սպառման ծավալը էական գերազանցել է էներգախնայողության աշխատանքներից հետո նախատեսված էլեկտրաէներգիայի ծավալներին:
- ՀՀ ԱՆ ՔԿԾ-ի և Հիմնադրամի միջև 2018 թվականի ապրիլի 20-ին կնքված «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» թիվ ՀՀ ԱՆ ՔԿՎ-ՄԱ-ԱՊՁԲ-18/2 պայմանագրով սահմանված ընդհանուր 169,893.4 հազ. դրամի հանդերձանքի և անկողնային պարագաների, ինչպես նաև ԱՆ ՔԿՎ-ՄԱ-ԱՊՁԲ-18/1 պայմանագրով սահմանված ընդհանուր 172,840.0 հազ. դրամի հացի մատակարարման գործընթացներում չի պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1.1 մասով և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 23.4 կետի 17-րդ տողով սահմանված պահանջները:

ՈՉ ԼԻԱՐԺԵՔ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Մեր կարծիքով, բացառությամբ <<Ոչ լիարժեք եզրահանգման հիմք>> պարագրաֆում նկարագրված հարցերի ազդեցության՝ 2018-2019թթ. առաջին եռամսյակի ընթացքում ծառայության և հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեությունը, բոլոր էական առումներով համապատասխանում է իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

Դավիթ Չիբուխյան՝

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ

22 փետրվարի, 2021 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,

Բաղրամյան փող. 19, ք.Երևան, Հայաստան

4.ԱՄՓՈՓԱԳԻՐ

Քրեակատարողական ծառայություն

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության 2018 թվականի բյուջեի ծախսերի տարեկան պլանը կազմել է 8,304,597.9 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը կազմել է 8,781,818.23 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 8,562,233.66 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 8,343,685.57 հազ. դրամ:

2019 թվականի առաջին եռամսյակի պլանը կազմել է 1,959,479.7 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 1,987,199.7 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 1,599,455.73 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 2,316,985.32 հազ. դրամ:

Քրեակատարողական ծառայության համակարգի աշխատակիցների աշխատանքային գործունեության նկատմամբ որոշ սահմանափակումների պահպանման վերաբերյալ

- Ուսումնասիրվել է Քրեակատարողական ծառայության համակարգում աշխատողների՝ քրեակատարողական ծառայողների, քաղաքացիական հատուկ ծառայողների, պայմանագրային և վարձու աշխատողների այլ կազմակերպություններում միաժամանակ վճարովի աշխատանքներ կատարելու փաստերը: Արդյունքում արձանագրվել է, որ թվով 85 քրեակատարողական և քաղաքացիական հատուկ ծառայողներ միաժամանակ կատարել են թվով 96 կազմակերպություններում այլ վճարովի աշխատանքներ, որոնք քրեակատարողական ծառայողների մասով չեն հանդիսացել գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներ, իսկ քաղաքացիական հատուկ ծառայողների մասով՝ չեն հանդիսացել գիտական, մանկավարժական, ստեղծագործական և բուժական աշխատանքներ, որը << ՀՀ Քրեակատարողական ծառայության մասին >> ՀՀ օրենքի համապատասխան հոդվածների /հաշվետու ժամանակաշրջանում գործող ինկորպորացիա/ համաձայն քրեակատարողական ծառայողների և քաղաքացիական հատուկ ծառայողների համար այլ վճարովի աշխատանքներ կատարելու մասով առկա էր սահմանափակումներ: Ընդ որում առկա է դեպքեր, երբ միաժամանակ Քրեակատարողական ծառայության համակարգում աշխատելու հետ միաժամանակ անձը աշխատել է նաև մեկից ավելի այլ կազմակերպություններում:

- Առկա են դեպքեր, երբ Քրեակատարողական ծառայության համակարգի թվով 16 քաղաքացիական հատուկ ծառայողներ, պայմանագրային կամ վարձու

աշխատողներ միաժամանակ աշխատել են նաև այլ կազմակերպություններում /թվով 25/: Թեև տվյալ դեպքերում օրենսդրությամբ որևէ սահմանափակում չկա, սակայն միաժամանակ մեկից ավելի կազմակերպություններում աշխատելու պարագայում կարող է աշխատաժամանակների որոշակի համընկնումների ռիսկ առաջանալ:

Քրեակատարողական ծառայության աշխատակիցների ՀՀ տարածքից դուրս գտնվելու հանգամանքով աշխատանքից անհարգելի բացակայությունների վերաբերյալ

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության աշխատակիցների սահմանահատումների /ՍԷԿՏ/ վերաբերյալ տվյալները համադրելով այդ նույն աշխատակիցների 2018 թվականի վճարվող և չվճարվող արձակուրդների, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու ժամանակահատվածների հետ հայտնաբերվել են թվով 14 աշխատակիցներ, որոնք հաշվետու ժամանակահատվածի տարբեր օրերին փաստաթղթերով աշխատանքի մեջ լինելու պարագայում՝ փաստացի անհարգելի բացակայել են աշխատանքից՝ գտնվելով ՀՀ տարածքից դուրս:

Սննդամթերքի տրամադրման վերաբերյալ

Ուսումնասիրվել է Քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալներին սննդի տրամադրման համապատասխանությունը ՀՀ կառավարության 15.10.2015թ. թիվ 1182-Ն որոշման 1.1 և 1.4 կետերի հավելված 1-ով և հավելված 4-ով սահմանված ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց, ինչպես նաև հղի, կերակրող մայր, անչափահաս և (կամ) հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալներին սննդի օրական նվազագույն չափաբաժինների հետ: Ուսումնասիրվել է 2018 թվականի ընթացքում թվով 12 ՔԿՀ-երում ներկայացված ամփոփ տեղեկատվության հիման վրա սննդի տրամադրման համապատասխանությունը գործող նվազագույն չափանիշներին: Պարզվել է, որ սննդամթերքի գերակշռող տեսակների դեպքերում առկա է սահմանված նվազագույն չափաքանակներից էական շեղումներ:

Էներգետիկ ծառայությունների վերաբերյալ

- Կնքված պայմանագրերի հիման վրա էներգախնայողության աշխատանքների կատարման արդյունքում քրեակատարողական հիմնարկներում ջեռուցման համար սպառվող ջերմային էներգիայի տարեկան սպառումը պետք է նվազեր միջինը 49 %-ով, սակայն 2018թ. էներգախնայողության միջոցառումների իրականացված քրեակատարողական հիմնարկներում էներգիայի սպառումը նվազել է 44.3%-ով:

- Էներգախնայողության աշխատանքներ իրականացված 6 քրեակատարողական հիմնարկներում էլեկտրաէներգիայի տարեկան սպառման ծավալը էական գերազանցել է էներգախնայողության աշխատանքներից հետո նախատեսված էլեկտրաէներգիայի ծավալներին:

- Էներգախնայողության աշխատանքների արդյունքում ակնկալվող էներգետիկ ծառայությունների համար վճարվող գումարի նվազման փոխարեն 2017թ. ավելացել է 305,999.6 հազ. դրամով, իսկ 2018թ. 166,487.1 հազ. դրամով:

Հիմնադրամի մասով

ՀՀ ԱՆ ՔԿԾ-ի և Հիմնադրամի միջև 2018 թվականի ապրիլի 20-ին կնքված «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» թիվ ՀՀ ԱՆ ՔԿՎ-ՄԱ-ԱՊՁԲ-18/2 պայմանագրով սահմանված ընդհանուր 169,893.4 հազ. դրամի հանդերձանքի և անկողնային պարագաների, ինչպես նաև ԱՆ ՔԿՎ-ՄԱ-ԱՊՁԲ-18/1 պայմանագրով սահմանված ընդհանուր 172,840.0 հազ. դրամի հացի մատակարարման գործընթացներում չի պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1.1 մասով և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 23.4 կետի 17-րդ տողով սահմանված պահանջները:

5.ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Քրեակատարողական ծառայություն

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության 2018 թվականի և 2019 թվականի առաջին եռամսյակի ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության 2018 թվականի բյուջեի ծախսերի տարեկան պլանը կազմել է 8,304,597.9 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը կազմել է 8,781,818.23 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 8,562,233.66 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 8,343,685.57 հազ. դրամ:

2019 թվականի առաջին եռամսյակի պլանը կազմել է 1,959,479.7 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 1,987,199.7 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 1,599,455.73 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 2,316,985.32 հազ. դրամ:

Քրեակատարողական ծառայությունում 2018 թվականի աշխատողների միջին թվաքանակը կազմել է 2221, փաստացի վճարվել է 6,044,663.8 հազ. դրամ աշխատավարձ:

Քրեակատարողական ծառայության համակարգի աշխատակիցների աշխատանքային գործունեության նկատմամբ որոշ սահմանափակումների պահպանման վերաբերյալ:

<<Քրեակատարողական ծառայության մասին>> ՀՀ օրենքի /հաշվետու ժամանակաշրջանում գործող ինկորպորացիա/ 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն <<Քրեակատարողական ծառայությունում ծառայությունը պետական ծառայության հատուկ տեսակ է, որի առանձնահատկությունները սահմանվում են <<Քրեակատարողական ծառայության մասին>> ՀՀ օրենքով:

Օրենքի 2-րդ հոդվածի 3.1 մասի համաձայն <<Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայությունը պետական ծառայության տեսակ է:

Քրեակատարողական ծառայության խնդիրների և պաշտոնների առանձնահատկություններից ելնելով քաղաքացիական հատուկ ծառայության կարող են անցնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները >>:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆԻԶ ՊԱԼԱՏԻ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քրեակատարողական ծառայության համակարգում բացի քրեակատարողական ծառայողներից և քաղաքացիական հատուկ ծառայողներից առկա է նաև պայմանագրային և վարձու աշխատողներ: Քրեակատարողական ծառայողների և քաղաքացիական հատուկ ծառայողների համար աշխատանքային գործունեության ընթացքում օրենսդրությամբ /հաշվետու ժամանակաշրջանում գործող/ առկա են որոշակի սահմանափակումներ: Մասնավորապես <<Քրեակատարողական ծառայության մասին>> ՀՀ օրենքի 32 հոդվածի 1.1 մասի համաձայն Քրեակատարողական ծառայողն իրավունք չունի կատարելու վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից, իսկ օրենքի 51.19 հոդվածի համաձայն քաղաքացիական ծառայողն իրավունք չունի կատարելու վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական և բուժական աշխատանքից: Քրեակատարողական ծառայության համակարգի աշխատողների կողմից նշված սահմանափակումները պահպանելու խնդիրները ուսումնասիրելու նպատակով արտաքին հարցում է կատարվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե և ամփոփվել և վերլուծվել է ստացված տեղեկատվությունը, որի արդյունքում պարզվել է հետևյալը՝

Թվով 85 քրեակատարողական և քաղաքացիական հատուկ ծառայողներ միաժամանակ կատարել են այլ վճարովի աշխատանք և հանդիսացել են թվով 96 այլ կազմակերպությունների աշխատողներ: Ընտրանքային կարգով հարցումներ է ուղարկվել համապատասխան կազմակերպություններ: Ստացված տեղեկատվությամբ տվյալ կազմակերպություններում այդ անձանց զբաղեցված պաշտոնները և աշխատանքային ռեժիմները ուսումնասիրելու արդյունքները հիմք են տալիս արձանագրելու, որ տվյալ դեպքերում մեկից ավելի աշխատատեղեր զբաղեցնելու պարագայում կարող են աշխատաժամանակների համընկնումների դիսկեր առաջանալ: Այսպես օրինակ՝

- <<Արմավիր>> ՔԿՀ-ի աշխատակիցը հանդիսանալով քրեակատարողական ծառայող, ՔԿՀ-ում աշխատել է ամենօրյա 8 ժամյա աշխատանքային ռեժիմով: ՔԿՀ-ում աշխատելուն զուգահեռ 14 ամիս /02.2018-03.2019թթ./ աշխատել է նաև ապահովագրական ընկերությունում որպես ապահովագրական պատահարի սպասարկման աշխատակից: Քաղաքացիաիրավական պայմանագրի 2.4 կետով սահմանված ծառայությունների մեջ է ընդգրկվում ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում այդ մասին տեղեկանալուց հետո 15-30 րոպեում լինել դեպքի վայրում, կատարել դեպքի վայրի զննություն, կատարել պատահարի հետ կապված լուսանկարում և այլն:

- <<Սևան>> ՔԿՀ-ի աշխատակիցը հանդիսանալով քրեակատարողական ծառայող, ՔԿՀ-ում աշխատել է ամենօրյա 8 ժամյա աշխատանքային ռեժիմով: ՔԿՀ-ում աշխատելուն զուգահեռ 11 ամիս /05.2018-03.2019թթ./ աշխատել է նաև ԲԲԸ-ում: Համաձայն ԲԲԸ-ի Գլխավոր տնօրենի ներկայացված տեղեկատվության ԲԲԸ-ում աշխատել է 10.11.2004թ.ից: Հաշվետու ժամանակաշրջանում աշխատել է էլեկտրական տեղամասում, որպես հերթափոխի պետ և ըստ աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրի ԲԲԸ-ում ամսական աշխատել է 17-ից 23 օր:
- ՔԿԾ-ի աշխատակիցը հանդիսանալով քրեակատարողական ծառայող, ՔԿԾ-ում աշխատել է ամենօրյա 8 ժամյա աշխատանքային ռեժիմով: ՔԿԾ-ում աշխատելուն զուգահեռ 15 ամիս /01.2018-03.2019թթ./ աշխատել է նաև Հիմնադրամում /ՀՀ կառ. կողմից հիմնադրված/: Աշխատաժամանակի տևողությունը կազմում է օրական 3 ժամ, շաբաթական 15 ժամ, աշխատաժամանակի սկիզբ է սահմանվել ժամը 18-30, ավարտը ժամը 21-30:
Ընդ որում առկա է դեպքեր, երբ միաժամանակ Քրեակատարողական ծառայության համակարգում աշխատելու հետ միաժամանակ անձը աշխատել է նաև մեկից ավելի կազմակերպություններում: Օրինակ՝
- <<Գորիս>> ՔԿՀ-ի աշխատակիցը հանդիսանալով քրեակատարողական ծառայող, ՔԿԾ-ում աշխատել է ամենօրյա 8 ժամյա աշխատանքային ռեժիմով: ՔԿՀ-ում աշխատելուն զուգահեռ 15 ամիս /01.2018-03.2019թթ./ աշխատել է Բժշկական կենտրոնում, 13 ամիս /03.2018-03.2019թթ./ աշխատել է նաև այլ Բժշկական կենտրոնում: Ընդ որում 13 ամիս շարունակ /03.2018-03.2019թթ./ վերջինս աշխատել է երեք կազմակերպություններում միաժամանակ/: Վերջինս Բժշկական կենտրոններից մեկում աշխատել է որպես ռենտգենոլոգ: Աշխատաժամանակը՝ 08³⁰-15⁰⁰, իսկ 01.08.2017թ. և 01.01.2019թ. կնքված Ծառայությունների մատուցման պայմանագրերի համաձայն աշխատել է այլ բժշկական կենտրոնում՝ որպես բժիշկ ռենտգենոլոգ:
- <<Նուբարաշեն>> ՔԿՀ-ի աշխատակիցը հանդիսանալով քրեակատարողական ծառայող ՔԿՀ-ում աշխատել է ամենօրյա 8 ժամյա աշխատանքային ռեժիմով: ՔԿՀ-ում աշխատելուն զուգահեռ 15 ամիս /01.2018-03.2019թթ./ աշխատել է նաև ՓԲՀ-ում, 2 ամիս /07.2018-08.2018թթ./ աշխատել է այլ ընկերությունում, 1 ամիս

/01.2018թ./ պոլիկլինիկայում: Հարկ է նշել, որ 15 ամիս /01.2018-03.2019թթ./ վերջինս աշխատել է երկու կազմակերպություններում միաժամանակ և 2 ամիս /07.2018-08.2018թթ./ միաժամանակ աշխատել է երեք կազմակերպություններում միաժամանակ: Վերջինս ՓԲԸ-ում 01.01.2018թ-26.11.2018թ. աշխատել է ընկերության տեխնիկական բլոկում որպես էլեկտրամոնտյոր: Սահմանվել է հինգօրյա աշխատանքային շաբաթ՝ 40 ժամյա աշխատաժամանակի տևողությամբ, իսկ 26.11.2018- 01.04.2019թ. աշխատել է որպես գծային սպասարկման և կարգավորման մասնագետ՝ վեցօրյա աշխատանքային շաբաթ 40 ժամյա աշխատաժամանակի տևողությամբ:

Այսպիսով, Թվով 85 քրեակատարողական և քաղաքացիական հատուկ ծառայողներ միաժամանակ թվով 96 այլ կազմակերպություններում կատարելով այլ վճարովի աշխատանք, չեն պահպանել <<Քրեակատարողական ծառայության մասին>> ՀՀ օրենքի 32 հոդվածի 1.1 մասով և 51.19 հոդվածով սահմանված պահանջները՝ Քրեակատարողական ծառայողն իրավունք չունի կատարելու վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից, ինչպես նաև քաղաքացիական ծառայողն իրավունք չունի կատարելու վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական և բուժական աշխատանքից: Առկա է անհամապատասխանություն <<Քրեակատարողական ծառայության մասին>> ՀՀ օրենքի 32 հոդվածի 1.1 մասով և 51.19 հոդվածով սահմանված պահանջների մասով:

<<Քրեակատարողական ծառայության մասին>> ՀՀ օրենքում 21.01.2020թ. կատարված փոփոխությամբ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով <<Քրեակատարողական ծառայությունում ծառայող քաղաքացին հանրային ծառայող է>>, իսկ <<Հանրային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն <<Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից>>:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանում գործող «Քրեակարարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1.1 մասի և 51.19-րդ հոդվածի խմբագրություններով սահմանված է եղել, որ քրեակարարողական և քաղաքացիական ծառայողներն իրավունք չունեն կարարելու վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից (օրենքի հիշյալ հոդվածները գործել են մինչև 22.02.2020թ., որը հետո այդ սահմանափակումները կարգավորվել են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով):

Չնայած վերոհիշյալ սահմանափակումներին՝ հաշվեքննությամբ արձանագրվել է, որ թվով **101** քրեակարարողական և քաղաքացիական հատուկ ծառայողներ նույն ընթացքում վճարովի աշխատանք են կարարել նաև այլ կազմակերպություններում:

Վերոգրյալի հիման վրա՝ Արձանագրությամբ առաջարկվել է համապատասխան միջոցներ ձեռնարկել օրենսդրական սահմանափակումները պահպանելու ուղղությամբ:

Արձանագրվածի կապակցությամբ հարկ է նշել, որ հիշյալ ծառայողներից **52-ը** հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանից հետո արդեն իսկ ազատված են եղել քրեակարարողական ծառայությունից և այլևս չեն հանդիսանում համակարգի ծառայող կամ աշխատակից:

Մնացած **49** ծառայողների (աշխատակիցների) վերաբերյալ Քրեակարարողական ծառայությունում ներկայումս իրականացվում են ուսումնասիրություններ՝ օրենսդրական սահմանափակումների խախտման փաստը պարզելու (փաստագրելու) և նրանց նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու համար:

Նմանատիպ խախտումները հետայսու բացառելու նպատակով Քրեակարարողական ծառայության կողմից ձեռնարկվել են իրավակազմակերպական բնույթի միջոցառումներ, այն է՝ Քրեակարարողական ծառայության համակարգում ծառայության (աշխատանքի) ընդունվելու համար

դիմած յուրաքանչյուր անձ (թեկնածու) պարտադիր տեղեկացվում է գործող սահմանափակումների մասին, այդ կապակցությամբ նրանից վերցվում է նաև համապատասխան հայտարարություն: Քրեակատարողական ծառայության համակարգում ծառայության (աշխատանքի) ընդունված ծառայողները (աշխատակիցները) պարտավոր են նաև անձնական տվյալների փոփոխության (այդ թվում նաև՝ սահմանափակումների առկայության) մասին հայտնել Քրեակատարողական ծառայության կամ համապատասխան քրեակատարողական հիմնարկի կադրերի և անձնակազմի հետ տարվող աշխատանքների ստորաբաժանում:

Հաշվեքննողների մեկնաբանությունները

Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացվել է պարզաբանում արձանագրված փաստերի վերաբերյալ ծառայության կողմից կատարված կանխարգելիչ գործողությունների վերաբերյալ, ինչպես նաև տեղեկություններ հաշվետու ժամանակաշրջանից հետո աշխատանքից ազատված աշխատակիցների վերաբերյալ:

Քրեակատարողական ծառայության աշխատակիցների ՀՀ տարածքից դուրս գտնվելու հանգամանքով աշխատանքից անհարգելի բացակայությունների վերաբերյալ

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության աշխատակիցների տվյալները /ՀԾՀ-ները/ ուղարկվել են ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն տվյալները ճշգրտելու նպատակով, այնուհետև այն ուղարկվել է ՀՀ ԱԱԾ ՍԷԿՏ: Համադրելով այդ նույն աշխատակիցների՝ թվով 2618 անձանց մասով, 2018 թվականի վճարվող և չվճարվող արձակուրդների, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու ժամանակահատվածները և ՀՀ տարածքից դուրս գտնվելու ժամանակահատվածները, հայտնաբերվել են այնպիսի աշխատակիցներ, որոնք անհարգելի բացակայել են աշխատանքից՝ գտնվելով ՀՀ տարածքից դուրս:

Արդյունքում ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության թվով 14 աշխատակիցներ անհարգելի՝ 103 օր բացակա լինելու պարագայում աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրում նշվել են որպես <<ներկա>> և ստացել են ընդամենը 855.7 հազ. դրամ աշխատավարձ:

Օրինակ.

1. <<Արթիկ>> ՔԿՀ-ի աշխատակիցը 2018 թվականի օգոստոսի 3-ից մինչև հոկտեմբերի 30-ը գտնվել է ՀՀ-ից դուրս, որից 05. 08. 2018-04. 09. 2018թ-ը եղել է արձակուրդում, իսկ մնացած ժամանակահատվածի համար ներկայացրել ՌԴ-ից ստացված անաշխատունակության թերթիկ, որը չի կարող հիմք հանդիսանալ բացակայած օրերը հարգելի համարելու համար՝ համաձայն ՀՀ կառավարության 14. 07. 2011 թվականի 1024 որոշման հավելված 6-ի, այն է.

❖ Օտարերկրյա պետության բժշկական հաստատության տված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի (ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածը հաստատող այլ փաստաթղթի) (այսուհետ՝ բժշկական փաստաթուղթ) հիման վրա քաղաքացուն տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ժամանակավոր անաշխատունակության թերթիկ (այսուհետ՝ անաշխատունակության թերթիկ):

❖ Քաղաքացին Առողջապահության նախարարություն է ներկայացնում հյուպատոսական վավերացմամբ, իսկ միջազգային պայմանագրով նախատեսված դեպքում՝ ապոստիլի հիման վրա վավերացված բժշկական փաստաթուղթը և դրա նոտարական կամ հյուպատոսական կարգով վավերացված թարգմանությունը:

❖ Անկախ պետությունների համագործակցության անդամ երկրների բժշկական հաստատության տված ժամանակավոր անաշխատունակության թերթիկն առանց զինանշանի պատկերով կնիքի լինելու դեպքում Առողջապահության նախարարությունը բժշկական փաստաթղթերի իսկությունը և համապատասխանությունը պարզում է գրավոր հարցումով՝ հարցում կատարելու վերաբերյալ Առողջապահության նախարարությանը դիմումատուի տված՝ նոտարի վավերացրած լիազորագրի հիման վրա:

❖ Առողջապահության նախարարությունը ներկայացված փաստաթղթերի (այդ թվում՝ սույն կարգի 2.1-ին կետում նշված հարցմանն ի պատասխան՝ Անկախ պետությունների համագործակցության անդամ երկրի բժշկական հաստատությունից բժշկական փաստաթղթերի իսկությունը և համապատասխանությունը հավաստող փաստաթղթի) հիման վրա տալիս է քաղաքացուն անաշխատունակության թերթիկ տրամադրելու մասին գրավոր թույլտվություն:

❖ Քաղաքացուն առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունը, Առողջապահության նախարարության

գրավոր թույլտվության հիման վրա, անձին տրամադրում է անաշխատունակության թերթիկ: Սակայն տվյալ դեպքում վերոնշյալ ընթացակարգը չի պահպանվել և տվյալ անձի բացակայած օրերը քրեակատարողական ծառայության կողմից համարվել են հարգելի և նա ստացել է աշխատավարձ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Արձանագրության համաձայն՝ հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանում Քրեակատարողական ծառայության համակարգի թվով **16** ծառայողներ (աշխատակիցներ) գտնվել են ՀՀ տարածքից դուրս և ծառայության (աշխատանքի) չեն ներկայացել, սակայն աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերում նշվել են «ներկա», և նրանց տրվել է վարձատրություն՝ 1.285.696 ՀՀ դրամի չափով:

Արձանագրվածի կապակցությամբ հարկ է նշել, որ՝

- ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի երրորդ կարգի մասնագետ **Դ.Հ. 05.08.2018** թվականից մինչև **04.09.2018** թվականը գտնվել է հերթական արձակուրդում, որի համար վճարվել է աշխատավարձ՝ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՕ-195-Ն օրենքի 61-րդ հոդվածի 13-րդ կետի: Արձակուրդում գտնվելը և ծառայության չներկայանալն արտացոլվել է աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրում:

Այնուհետև **Դ.Հ.** նույն քրեակատարողական հիմնարկի կադրերի հետ տարվող աշխատանքների խումբ է ներկայացրել **03.09.2018** թվականից մինչև **12.10.2018** թվականը և **13.10.2018** թվականից մինչև **25.10.2018** թվականն ընդգրկող ժամանակահատվածների վերաբերյալ ՌԴ-ի կողմից տրված անաշխատունակության 2 թերթիկներ, որոնք վավերացնելու և դրանց հետագա կարգավիճակը պարզելու համար ուղարկվել են ՀՀ ոստիկանության բժշկական վարչության պոլիկլինիկա: Վերջինիս կողմից հիշյալ թերթիկները կնքելու

հանգամանքը հիմք է հանդիսացել եզրակացնելու, որ մինչ այդ պոլիկլինիկայի կողմից կատարվել են թերթիկների իսկությունը պարզելու գործառնություններ:

Հիմք ընդունելով ՀՀ ոստիկանության բժշկական վարչության պոլիկլինիկայի կողմից անաշխատունակության թերթիկները կնքելու փաստը, ինչպես նաև «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» 160-Ն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի պահանջը («Զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածում պահպանվում է նրանց վարձարրությունը»)՝ Դ. Հ.-ին վճարում է կատարվել նաև ծառայությունից բացակա օրերի համար:

- ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վիրաբուժական բաժանմունքի բժիշկ ուռուցքաբան Ա.Կ. և բժիշկ վնասվածքաբան Ա.Գ. վճարումը կատարվել է նույն բաժանմունքի կողմից տրված աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի հիման վրա:

- ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկի հաշվապահական հաշվառման տվյալներով՝ հիշյալ քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի աշխատակից Ա.Պ. չի բացակայել Հայաստանի Հանրապետությունից: Վերջինիս հայտարարության համաձայն՝ դեռևս 2014 թվականին անձնագրի վավերականության ժամկետը լրացած է եղել, դրա փոխարենը ստացել է նույնականացման քարտ, որով հնարավոր էլ չէ լքել ՀՀ տարածքը:

- ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկում 3114910785 ՀԾՀ-ով ծառայող (աշխատակից) երբևէ չի աշխատել: Այդ համարով ՀԾՀ-ն պարկանում է ոմն Ա.Հ.-ին, ով երբեք Քրեակատարողական ծառայության համակարգի ծառայող (աշխատակից) չի հանդիսացել: ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկում աշխատել է Ա.Հ. որի ՀԾՀ-ն այլ է:

Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված մյուս բոլոր դեպքերով ներկայումս Քրեակատարողական ծառայությունում իրականացվում են ուսումնասիրություններ:

Հաշվեքննողների մեկնաբանությունները

Դ.Հ.-ի մասով՝ Մեր կողմից արձանագրված փաստը վերաբերվում է ՀՀ կառավարության 14.07.2011 թվականի 1024 որոշման հավելված 6-ի համապատասխան մասերի պահանջների մասով անհամապատասխանություններին, որը հստակ նշված էր արձանագրությունում և արտացոլված է նաև ընթացիք եզրակացությունում: Ա.Է.-ի և Ա.Գ.-ի մասով ներկայացվել է ընդամենը պարզաբանում նրանց աշխատավարձ վճարելու հիմքի վերաբերյալ: Ա.Հ.-ի և Ա.Պ.-ի մասով ընդունվել է և կատարվել է ճշգրտում:

Սննդամթերքի տրամադրման վերաբերյալ

2018թ. ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության և տարբեր մատակարար կազմակերպությունների միջև կնքվել է 648,459.9 հազ. դրամի սննդամթերքի ձեռքբերման պայմանագրեր, սակայն տարվա ընթացքում կնքված տարբեր լրացուցիչ համաձայնագրերի արդյունքում փոփոխված պայմանագրային արժեքը կազմել է 482,563.5 հազ. դրամ:

Հաշվեքննության ընթացքում ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայությունից պահանջվել է ամփոփ տեղեկատվություն 2018 թվականի ընթացքում 12 քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալներին և կալանավորներին հատկացված սննդամթերքի փաստացի ծախսերի վերաբերյալ: Նշված տեղեկատվությունը համադրվել է ՀՀ կառավարության 15.10.2015թ. թիվ 1182-Ն որոշման 1.1 և 1.4 կետերի հավելված 1-ով և հավելված 4-ով սահմանված ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց, ինչպես նաև հղի, կերակրող մայր, անչափահաս և (կամ) հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալներին սննդի օրական նվազագույն չափաբաժինների հետ: Համադրման արդյունքները ամփոփ տեսքով ներկայացված է աղյուսակ 1-ում՝

Աղյուսակ 1

ՔՎՀ-ների անվանումը	Չ/Փ	Անվանումը	Նույն Բարձր	Ասան	Կոշ	Արթիկ	Վանաձոր	Վարդաշեն	Գորիս	Արմավիր	Երևան կենտր	Հրազդան	Դավիթ
Պեղվող անվ. Բանակի խոր	անվ.	246,314	263,933	109,288	94,402	100,342	53,896	65,400	30,080	38,298	12,490	70,211	48,940
Ավտո անվանի քանակը՝ խոր	անվ.	239,344	251,911	99,450	89,248	94,410	52,093	49,230	29,981	34,550	7,828	63,074	47,257
Փոխադրված կա ան. անվանի կա դատապ քանակը	անվ.	2,972	179	0	0	261	58	1,209	0	287	2	159	776
Հիվանդ կա ան. անվ. կա դատապ	անվ.	16,277	11,693	17,598	13,231	19,528	3,992	3,781	330	5,016	0	6,780	41,588
Անդամները անվանումը	Տարեկան ծախսի և տարեկան սահմանված չափաբաժինների տարբերություն												
1 Հաց	կգ	-241	-86	4,919	261	2,200	6,899	5,832	0	-58	-1	1,455	519
2 Կարտոֆիլ	կգ	-3,710	-10,862	-2,521	-2,379	-428	6,463	-706	-546	-475	-269	-585	-198
3 Անկարոն	կգ	-89	-619	35	-150	-10	388	29	-2	-34	0	-443	1
4 Բանջարեղեն	կգ	-3,261	-3,822	664	-1,480	-486	1,750	503	-486	1,180	-140	-855	-726
5 Ձախրեղեն	կգ	591	-1,952	168	-163	132	1,839	260	174	-1	81	-89	131
6 Վարսակի վաթիլներ	կգ	94	48	98	146	101	44	16	26	54	0	59	-17
7 Անանիս	կգ	-2,293	-2,621	-1,079	-891	-1,106	39	-238	-675	-273	-59	-528	-272
8 Ձկան պահածո	կգ	-1,688	-1,024	-450	-493	-456	-56	-493	401	-86	-6	-217	-422
9 Խուցքած կաթ	կգ	-2,561	-2,680	-855	-834	-944	-222	-426	-277	-303	-62	-663	-469
10 Պանիր	կգ	-185	-431	-185	-150	-86	98	66	89	-48	-3	-27	-232
11 Հալի ձու	հառ	-13,403	-14,239	-5,274	-5,151	-5,653	-55	-1,961	-2,833	-1,461	-390	-2,756	-1,517
12 Կարագ	կգ	193	-166	-62	13	62	187	56	38	19	9	-34	68
13 Բուսական լուղեր, ձեթ	կգ/լ	-90	-1,171	217	-168	65	568	21	-1	2	-4	-48	1
14 Մրգային ու թավիրգ	լ/կգ	6,266	1,000	946	1,447	2,491	3,156	634	786	1,017	186	1,186	1,222
15 Շաքարավազ	կգ	-119	-821	0	-137	-52	521	29	0	-14	0	-10	-5
16 Թեյ	կգ	-23	-81	-10	-12	-6	26	2	0	-1	0	-3	-3
17 Տոմատ	կգ	-15	-96	0	-17	0	65	5	-2	-2	0	-1	-14
18 Աղ, կերակրի	կգ	-15	-101	0	-17	-1	102	5	-1	-2	0	-1	0

19	Դախեստերն	կգ	-3	-4	0	0	0	1	0	0	0	0	0	0
----	-----------	----	----	----	---	---	---	---	---	---	---	---	---	---

Աղյուսակից երևում է որ,

• Կարտոֆիլի, բանջարեղենի, մակարոնեղենի, ձավարեղենի և վարսակաձավարի քանակները սահմանված չափաբաժիններից շեղումներով են տրամադրվել: Նույնիսկ հաշվի առնելով ՀՀ կառավարության 31.07.2003թ. թիվ 961-Ն որոշման 1-ին կետի ա/ ենթակետի հավելված 1-ով սահմանված քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց տրվող սննդամթերքները մեկը մյուսով փոխարինելու հանգամանքը, այնուամենայնիվ կարտոֆիլի, բանջարեղենի, մակարոնեղենի, ձավարեղենի և վարսակաձավարի քանակները 4 ՔԿՀ-ներում (Արթիկ, Վանաձոր, Վարդաշեն, Աբովյան) փաստացի տրամադրված քանակները գերազանցել է սահմանված չափաբաժինների քանակներին՝ ընդհանուր 21,897կգ-ով (քանակները հաշվարկված են բանջարեղենի նորմայով՝ 100գ կարտոֆիլին և բանջարեղենին փոխարինում է 20գ ձավարեղեն, վարսակաձավար կամ մակարոնեղեն), իսկ 7 ՔԿՀ-ներում (Արմավիր, Նուբարաշեն, Սևան, Կոշ, Գորիս, Հրազդան, Դատապարտյալների հիվանդանոց) քանակները ընդհանուր 59,157կգ-ով (քանակները հաշվարկված են բանջարեղենի նորմայով՝ 100գ կարտոֆիլին և բանջարեղենին փոխարինում է 20գ ձավարեղեն, վարսակաձավար կամ մակարոնեղեն) քիչ են տրամադրվել սահմանված չափաբաժինների քանակներից՝ Աղյուսակ 2:

Աղյուսակ 2											
Արմավիր	Նուբարաշեն	Սևան	Կոշ	Արթիկ	Վանաձոր	Վարդաշեն	Գորիս	Աբովյան	Երևան կենտրոն	Հրազդան	Դատ Հիվ
-3,993	-27,302	-353	-4,691	200	19,571	1,324	-45	802	-6	-3,809	-347

• 7 ՔԿՀ-ներում /Սևան, Կոշ, Արթիկ, Վանաձոր, Վարդաշեն, Հրազդան, Դատապարտյալների հիվանդանոց/ փաստացի տրամադրված հացի քանակները գերազանցել է սահմանված չափաբաժինների քանակներին՝ ընդհանուր 22,085կգ-ով, իսկ 3 ՔԿՀ-ներում /Արմավիր, Նուբարաշեն, Աբովյան/ փաստացի տրամադրված հացի քանակները ընդհանուր 386կգ-ով քիչ են տրամադրվել սահմանված չափաբաժինների քանակներից:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

• Մրգահյուլը /միրգ/ բոլոր ՔԿՀ-ներում տրամադրվել է սահմանված չափաբաժիններից ընդհանուր 20,337լիտր ավել քանակությամբ (հաշվի է առնված նաև տրամադրված մրգի քանակները՝ համաձայն ՀՀ կառավարության 15.10.2015թ. թիվ 1182-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի հավելված 1-ով սահմանված ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց տրամադրվում է 100 գրամ մրգահյուլ կամ 200 գրամ միրգ):

• Մսամթերքի (մսի պահածո, հավի միս, տավարի ոսկորոտ միս), ձկան պահածոյի, խտացրած կաթի, պանրի, Հավի ձվի տրամադրման քանակները, գրեթե հիմնականում պակաս են տրամադրվել սահմանված չափաբաժիններից, սակայն հաշվի առնելով ՀՀ կառավարության 31.07.2003թ. թիվ 961-Ն որոշման 1-ին կետի ա/ ենթակետի հավելված 1-ով սահմանված՝ սննդամթերքները մեկը մյուսով փոխարինելու հանգամանքը հնարավոր չէ հստակ քանակական գնահատական տալ շեղումների մասով:

• Կարագի, բուսական յուղի և ձեթի տրամադրման քանակները հիմնականում ավել են եղել սահմանված չափաբաժիններից և հաշվի առնելով ՀՀ կառավարության 31.07.2003թ. թիվ 961-Ն որոշման 1-ին կետի ա/ ենթակետի հավելված 1-ով սահմանված սննդամթերքները մեկը մյուսով փոխարինելու հանգամանքը, հնարավոր է տրամադրել են այլ սննդամթերքների փոխարեն:

Այսպիսով առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 15.10.2015թ. N1182-Ն որոշման 1.1 և 1.4-րդ կետերի հավելված 1-ով և հավելված 4-ով սահմանված ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց, ինչպես նաև հղի, կերակրող մայր, անչափահաս և (կամ) հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալներին տրված սննդի օրական նվազագույն չափաբաժինների և փաստացի տրված քանակների միջև:

Ընտրանքային կարգով ուսումնասիրվել է Նուբարաշեն, Վանաձոր և Վարդաշեն ՔԿՀ-ներում դատապարտյալներին և կալանավորներին տրամադրված 1 ամսվա ճաշարանին անհրաժեշտ սննդամթերքների օրական ցանկերը /կաթսայի օրդերները/, որոնք համադրելով ՀՀ կառավարության 15.10.2015թ. թիվ 1182-Ն որոշման 1.1 և 1.4 կետերի հավելված 1-ով և հավելված 4-ով սահմանված ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց, ինչպես նաև հղի, կերակրող մայր, անչափահաս և (կամ) հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալներին տրված սննդի օրական նվազագույն չափաբաժինների հետ, արդյունքները ներկայացվում են ստորև:

• Նուբարաշեն ՔԿՀ 2018թ. ապրիլ ամիս

1. Դատապարտյալներին և կալանավորներին սահմանված չափաբաժինների համաձայն **մսամթերք (միս ոսկորով, մսի պահածո, հավի միս)** ամսական պետք է տրամադրվեր 16 օր, սակայն տրվել է 8 օր: Հաշվի առնելով դատապարտյալների և կալանավորվածների միջին ամսական թիվը սննդամթերքի սահմանված նվազագույն չափաբաժնից պակաս է տրվել մոտ **508.6** կգ մսամթերք (առանց ոսկոր միս, ֆիլե):

2. Դատապարտյալներին և կալանավորներին սահմանված չափաբաժինների համաձայն **ձկան պահածո** ամսական պետք է տրամադրվեր 8 օր, սակայն ընդհանրապես չեն տվել: Հաշվի առնելով դատապարտյալների և կալանավորվածների ապրիլ ամսվա միջին ամսական թիվը սննդամթերքի սահմանված նվազագույն չափաբաժնից պակաս է տրվել մոտ 460 կգ ձկան պահածո: Ամսվա ընթացքում չորս և ավելի ժամ տևողությամբ փոխադրված դատապարտյալներին և կալանավորներին սահմանված նորմին համապատասխան տրվել է ձկան պահածո:

3. դատապարտյալներին և կալանավորներին սահմանված չափաբաժինների համաձայն **խտացրած կաթ** պետք է տրամադրվեր յուրաքանչյուր օր, սակայն ընդհանրապես չեն տվել: Հաշվի առնելով դատապարտյալների և կալանավորվածների ապրիլ ամսվա միջին ամսական թիվը սննդամթերքի սահմանված նվազագույն չափաբաժնից պակաս է տրվել մոտ 431.8 կգ խտացրած կաթ:

4. դատապարտյալներին և կալանավորներին սահմանված չափաբաժինների համաձայն **պանիր** պետք է տրամադրվեր ամսական 15, սակայն տրվել է 13 օր: Ապրիլի 1-ից մինչև ապրիլի 11-ն ընկած ժամանակահատվածում սննդի հավելյալ կարիք ունեցող դատապարտյալներն ու կալանավորները չեն ստացել պանրի հավել չափաբաժինները՝ 7կգ: Հաշվի առնելով դատապարտյալների և կալանավորվածների ապրիլ ամսվա միջին ամսական թիվը սննդամթերքի սահմանված նվազագույն չափաբաժնից պակաս է տրվել մոտ 35կգ պանիր, կամ ընդհանուր պակաս է տրվել մոտ 42կգ:

5. դատապարտյալներին և կալանավորներին սահմանված չափաբաժինների համաձայն **հավի ձու** ամսական պետք է տրամադրվեր 6 օր, սակայն տրվել է 3 օր: Հաշվի առնելով դատապարտյալների և կալանավորվածների ապրիլ ամսվա միջին ամսական թիվը սննդամթերքի սահմանված նվազագույն չափաբաժնից պակաս է տրվել մոտ 2105 հատ ձու:

[ՀՀ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ](#)

6. դատապարտյալներին և կալանավորներին սահմանված չափաբաժինների համաձայն **բուսական յուղ կամ ձեթ** ՀՀ կառավարության 15.10.2015թ. թիվ 1182-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի հավելված 1-ով սահմանված յուրաքանչյուր օր պետք է տրամադրվեր 30 գրամ, սակայն 2.5 գրամ պակաս է տրամադրվել, արդյունքում սննդամթերքի սահմանված նվազագույն չափաբաժնից ամսվա ընթացքում պակաս է տրվել 54 կգ/վ բուսական յուղ կամ ձեթ:

Հարկ է նշել նաև Նուբարաշեն ՔԿՀ-ի 2018թ. ապրիլ ամսվա սննդամթերքի ծախսի վերաբերյալ ստացված ամփոփ տեղեկատվության և ՔԿՀ-ից ստացված ճաշարանին անհրաժեշտ սննդամթերքների օրական ցանկերում ներառված տեղեկատվության միջև առկա են տարբերություններ /Աղյուսակ 3/:

				Աղյուսակ 3
		Կաթսայի օրդերում նշված թիվ	Ամփոփ տեղեկատվության մեջ նշված թիվ	տարբերություն
1	Սնվող անձանց թիվը խոր	21591	23099	-1508
2	Փխտորված կալ սն. անձանց կամ դատալ թիվը	431	3	428
3	Հաց	11740.4	11547.9	192.6
4	Ձկան պահածո	107.7	0.8	107.0
5	Պանիր	264.7	247.6	17.1
6	Մրգահյութ	2245.3	2159.7	85.6

• Վանաձորի ՔԿՀ մարտ ամիս

1. Դատապարտյալներին և կալանավորներին սահմանված չափաբաժինների համաձայն **մակարոնեղեն** պետք է տրամադրվեր յուրաքանչյուր օր, սակայն 3 օր չեն տվել և փոխարինող սննդամթերք չի եղել, իսկ 7 օր տրվել է սահմանված նորմից ավելի կրկնակի չափաբաժիններով, որի արդյունքում ամսվա ընթացքում 18.63կգ ավել է տրվել սահմանված նվազագույն չափաբաժնից:

2. Դատապարտյալներին և կալանավորներին սահմանված չափաբաժինների համաձայն **մսամթերք (միս ոսկորով, մսի պահածո, հավի միս)** ամսական պետք է տրվեր 16 օր, սակայն ընդհանրապես չեն տրվել, փոխարենը 4 օր ձկան պահածո է տրվել որպես փոխարինող սննդամթերք, արդյունքում ամսվա ընթացքում դատապարտյալներին և կալանավորներին հասանելիք 16 օրից 12 օր չի տրվել մսամթերք: Հաշվի առնելով դատապարտյալների և կալանավորվածների մարտ ամսվա միջին ամսական թիվը սննդամթերքի սահմանված նվազագույն չափաբաժնից պակաս է տրվել մոտ 217 կգ մսամթերք (առանց ոսկոր միս, ֆիլե):

3. Դատապարտյալներին և կալանավորներին սահմանված չափաբաժինների համաձայն **ձկան պահածո** ամսական պետք է տրվեր 8 օր, փոխարենը տրվել է 10 օր, որից 4 օրերին տրվել է մսամթերքին փոխարինելու նորմային համարժեք քանակությամբ, հետևաբար կարելի է հասկանալ, որ ամսվա ընթացքում տրվել է 6 օր՝ 2 օր պակաս: Ամսվա ընթացքում 1 օր սահմանված չափաբաժնից 5.5կգ քիչ է տրվել: Հաշվի առնելով դատապարտյալների և կալանավորվածների մարտ ամսվա միջին ամսական թիվը սննդամթերքի սահմանված նվազագույն չափաբաժնից պակաս է տրվել մոտ 32 կգ ձկան պահածո, կամ ընդհանուր քիչ է տրվել 37.5 կգ ձկան պահածո:

4. դատապարտյալներին և կալանավորներին սահմանված չափաբաժինների համաձայն **խտացրած կաթ** պետք է տրամադրվեր յուրաքանչյուր օր, սակայն 8 օր չի տրվել, իսկ 1 օր էլ սահմանված չափաբաժնից 3.88կգ պակաս է տրվել: Հաշվի առնելով դատապարտյալների և կալանավորվածների մարտ ամսվա միջին ամսական թիվը սննդամթերքի սահմանված նվազագույն չափաբաժնից պակաս է տրվել մոտ 32.8 կգ խտացրած կաթ:

5. դատապարտյալներին և կալանավորներին սահմանված չափաբաժինների համաձայն **հավի ձու** ամսական պետք է տրամադրվեր 6 օր, սակայն ընդհանրապես չի տրվել: Հաշվի առնելով դատապարտյալների և կալանավորվածների մարտ ամսվա միջին ամսական թիվը սննդամթերքի սահմանված նվազագույն չափաբաժնից պակաս է տրվել մոտ 1207 հատ ձու:

6. դատապարտյալներին և կալանավորներին սահմանված չափաբաժինների համաձայն **պանիր** պետք է տրամադրվեր ամսական 15, սակայն տրվել է 14 օր՝ 1 օր չի տրվել: Հաշվի առնելով դատապարտյալների և կալանավորվածների մարտ ամսվա միջին ամսական թիվը սննդամթերքի սահմանված նվազագույն չափաբաժնից պակաս է տրվել մոտ 5 կգ պանիր:

7. մարտի 24-ից մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում դատապարտյալներին և կալանավորներին տրվող սննդամթերքի ճաշացանկից բացակայել են մսամթերքը, ձկան պահածոն, խտացրած կաթը, պանիրը և ձուն, որոնց փոխարինող սննդամթերք չի տրվել:

8. Հարկ է նշել նաև Վանաձոր ՔԿՀ-ում 2018թ. մարտ ամսվա սննդամթերքի ծախսի վերաբերյալ ստացված ամփոփ տեղեկատվության և ՔԿՀ-ից ստացված ճաշարանին անհրաժեշտ սննդամթերքների օրական ցանկերում ներառված տեղեկատվության միջև առկա են տարբերություններ սնվող դատապարտյալների և կալանավորների թվի վերաբերյալ: Այսպես՝ ճաշարանին անհրաժեշտ սննդամթերքների օրական ցանկերում ամսվա ընթացքում ներկայացված է սնվող 6236 դատապարտյալ և կալանավոր, իսկ ներկայացված սննդամթերքի ծախսի ամփոփ ամսական տեղեկատվության մեջ նշված է 4144

դատապարտյալ և կալանավոր, տարբերությունը կազմում է 2092 դատապարտյալ և կալանավոր:

• **Վարդաշեն ՔԿՀ օգոստոս ամիս**

1. Հավելյալ սննդի կարիք ունեցող դատապարտյալներին և կալանավորներին սահմանված չափաբաժինների համաձայն **վարսակաձավար** պետք է տրամադրվեր յուրաքանչյուր օր, սակայն ընդհանրապես չի տրվել: Ամսվա ընթացքում 341 հավելյալ սննդի կարիք ունեցող դատապարտյալների և կալանավորներին սննդամթերքի սահմանված նվազագույն չափաբաժնից պակաս է տրվել մոտ 6.8կգ վարսակաձավար:

2. Դատապարտյալներին և կալանավորներին սահմանված չափաբաժինների համաձայն **խտացրած կաթ** պետք է տրամադրվեր յուրաքանչյուր օր, սակայն օգոստոսի 8ից մինչև օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում ընդհանրապես չի տրվել, բայց 7 օր տրվել է համապատասխան չափաբաժին համարժեք սննդամթերք: Հաշվի առնելով դատապարտյալների և կալանավորվածների թիվը նշված ժամանակահատվածում սննդամթերքի սահմանված նվազագույն չափաբաժնից պակաս է տրվել մոտ 42.9 կգ խտացրած կաթ:

3. Հարկ է նշել նաև Վարդաշեն ՔԿՀ-ում 2018թ. օգոստոս ամսվա սննդամթերքի ծախսի վերաբերյալ ստացված ամփոփ տեղեկատվության և ՔԿՀ-ից ստացված ճաշարանին անհրաժեշտ սննդամթերքների օրական ցանկերում ներառված տեղեկատվության միջև առկա են տարբերություններ չորս և ավելի ժամ տևողությամբ փոխադրված դատապարտյալների և կալանավորների, ինչպես նաև սնվող դատապարտյալների և կալանավորների թվի վերաբերյալ: Այսպես ճաշարանին անհրաժեշտ սննդամթերքների ցանկերում ամսվա ընթացքում ներկայացված է սնվող 3921, փոխադրված 86 դատապարտյալ և կալանավոր, իսկ ներկայացված սննդամթերքի ծախսի ամփոփ ամսական տեղեկատվության մեջ նշված է սնվող 3690, փոխադրված 81 դատապարտյալ և կալանավոր, տարբերությունը կազմում է սնվող 231, փոխադրված 5 դատապարտյալ և կալանավոր:

Այսպիսով՝ հաշվի առնելով քրեակատարողական ծառայության և քրեակատարողական հիմնարկներում սննդամթերքների 01.01.2018թ. դրությամբ մնացորդները, քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալների և կալանավորների թվաքանակը, ինչպես նաև 2018թ. համար անհրաժեշտ

սննդամթերքի ձեռքբերման պայմանագրերի կնքման ամսաթվերը /13.04.2013թ-ից սկսված կնքվել են սննդամթերքի ձեռքբերման պայմանագրեր, բացի հացից/ կարելի է ասել, որ դատապարտյալներին և կալանավորներին ՀՀ կառավարության 15.10.2015թ. թիվ 1182-Ն որոշման 1.1 և 1.4 կետերի հավելված 1-ով և հավելված 4-ով սահմանված ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց, ինչպես նաև հղի, կերակրող մայր, անչափահաս և (կամ) հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալներին հատկացվող սննդի օրական նվազագույն չափաբաժիններից քիչ տրամադրելը պայմանավորված է եղել նաև սննդամթերքի գնման ժամկետների սխալ պլանավորման հանգամանքով:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Արձանագրությամբ փաստագրվել է, որ առկա են անհամապատասխանություններ ՀՀ կառավարության 15.10.2015 թվականի N 1182-Ն որոշման 1.1 և 1.4 կետերի հավելված N 1-ով և N 4-ով սահմանված ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց, ինչպես նաև հղի, կերակրող մայր, անչափահաս և (կամ) հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալներին տրված սննդի օրական նվազագույն չափաբաժինների և փաստացի տրված քանակների միջև:

Վերոհիշյալի կապակցությամբ հարկ է նշել, որ քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալներին սննդով ապահովման գործառույթի իրականացման ընթացքում երբեմն անհրաժեշտություն է ծագել առաջնորդվել նաև ՀՀ կառավարության 31.07.2003 թվականի N 961-Ն որոշման դրույթներով՝ այն սննդամթերքները, որոնց մատակարարումներն ինչ-ինչ պատճառներով ուշացել են կամ չեն իրականացվել, փոխարինվել են քրեակատարողական հիմնարկների պահեստներում փաստացի առկա այլ սննդամթերքներով: Արդյունքում ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալներին սննդանյութերի և էներգիայի նկատմամբ օրգանիզմի ֆիզիոլոգիական պահանջի նորմերը մշտապես ապահովվել են (կապված տարիքից օրգանիզմին անհրաժեշտ է օրական ապահովել 2.450-2.800 կկալ էներգետիկ արժեքով սնունդ): Ավելին, հաշվեքննության ժամանակաշրջանում կալանավորված անձանց և

դատապարտյալներին տրամադրվել է սնունդ, որի էներգետիկ արժեքը, մեկ անձի հաշվարկով, **օրական միջինը կազմել է 3.030 կկալ:**

Բացի այդ, մատակարար ընկերությունների կողմից պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների ուշացման յուրաքանչյուր դեպքում՝ ուշացված օրերի քանակով, համաձայն գնման պայմանագրերի, գանձվել են տույժեր՝ չմատակարարված ապրանքի գնի 0,05 տոկոսի չափով: 2018 թվականի ընթացքում կնքված սննդամթերքի մատակարարման պայմանագրերից թվով 6-ը (հավի ձու, կարկոֆիլ, խտացրած կաթ, տավարի մսի պահածո, տավարի միս տեղական ոսկորոտ, դեղձ, բիբար, պոմիդոր, վարունգ և սմբուկ) միակողմանի մասնակի լուծվել են՝ մատակարարների կողմից պայմանագրով նախատեսված պարտավորություններն էականորեն խախտելու՝ մատակարարումները սահմանված ժամկետներում չկատարելու և տեխնիկական բնութագրին անհամապատասխան ապրանքներ մատակարարելու պատճառներով: Արդյունքում, որպես տույժ, տուգանք և պայմանագրի ապահովում (10%), ՀՀ պետական բյուջեի հատուկ հաշվեհամարներին փոխանցվել է **շուրջ 16,3 միլիոն ՀՀ դրամ**, տվյալ մատակարարները ներառվել են նաև գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Վերլուծելով Արձանագրության մեջ նշված սննդամթերքի ծախսի վերաբերյալ կատարված հաշվարկները, կարելի է նկատել, որ ներկայացված ոչ բոլոր թվերն են ճիշտ արտահայտում սննդամթերքի փաստացի հատկացված լինելու պատկերը: Նշված եզրահանգման գալու պատճառ է հանդիսացել հացի ծախսի հետ կապված հաշվարկները, որի պարզաբանումը հետևյալն է.

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալներին հացը հատկացվել է հետևյալ մեխանիզմով՝ քրեակատարողական հիմնարկների սնվողների, ինչպես նաև հիվանդների և դատական նիստերի մեկնողների քանակները հիմնարկների վարչակազմերի կողմից հացի մատակարարին է տրամադրվել հացի մատակարարման նախորդ օրվա ընթացքում՝ մինչև 17:00-ը: Սահմանված քանակով հացն, ամենօրյա ռեժիմով

(բացի կիրակի օրվանից, շաբաթ օրերին հացի մատակարարումը կատարվել է երկու օրվա համար) ամբողջությամբ մատակարարվել և հատկացվել է կալանավորված անձանց և դատապարտյալներին՝ սահմանված չափաբաժիններով: Հացի մատակարարման հետ կապված ՀՀ ԱՆ քրեակարարողական ծառայության կենտրոնական մարմնի կողմից ուշացումներ չեն արձանագրվել, ուստի կարելի է հստակ ասել, որ այն վերլուծությունը, որ հացը կալանավորված անձանց և դատապարտյալներին հատկացվել է սահմանված չափաբաժիններից ավել կամ պակաս, չի արտացոլում իրականությունը: Նման իրավիճակի պատճառ կարող են հանդիսացած լինել նախորդ ժամանակահատվածների համար սնվող և չսնվող դատապարտյալների թվերի կապակցությամբ քրեակարարողական հիմնարկների հաշվարկների մեխանիկական սխալները, որն էլ հավանաբար անդրադարձել է Հաշվեքննիչ պալատի կողմից սննդի օրական նվազագույն չափաբաժինների ընդհանուր հաշվարկների վրա:

Միաժամանակ հարկ է նշել, որ **Արձանագրության մեջ նշված սննդամթերքի տրամադրման վերաբերյալ անհամապատասխանություններն այլևս արդիական չեն և ամբողջովին շրկված են**, քանի որ 2020 թվականի հունիս ամսից քրեակարարողական բոլոր հիմնարկներում սննդի ապահովման գործառույթն արդեն պատվիրակվել է մասնավոր կազմակերպությանը որից ձեռք է բերվել պատրաստի սննդի մատուցման ծառայություններ, որն իրենից ներկայացնում է մասնագիտացված խոհարարների կողմից սննդի պատրաստման, առաքման և հատկացման նոր ու արդյունավետ համակարգ:

Կնքված պայմանագրերի հիման վրա՝ ՀՀ ԱՆ քրեակարարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալներին օրական տրամադրվում է նախաճաշ, ճաշ և ընթրիք (ներառյալ հացը), որոնք պատրաստվում են քրեակարարողական հիմնարկների կամ այլ տարածքում գտնվող խոհանոցներում՝ թարմ սննդամթերքից և մասնագիտացված խոհարարների կողմից: Սնունդը տրամադրվում է նախապես մեկ շաբաթվա համար մատակարարի կողմից կազմված և քրեակարարողական հիմնարկի պետի կողմից հաստատված

ճաշացուցակով, որը պարբերաբար փոփոխվում է՝ սննդի բազմազանությունն ապահովելու նպատակով:

Ճաշացուցակները կազմելիս հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները՝

- սնունդը պետք է լինի բազմազան և որակյալ,
- սննդի միջին օրական էներգետիկ արժեքը պետք է ապահովի նվազագույնը 2.800 կկալ,

- պետք է առաջնորդվել ՀՀ կառավարության 31.07.2003 թվականի N 961-Ն և 15.10.2015 թվականի N 1182-Ն որոշումների պահանջներով՝ ապահովելով սննդամթերքի չափաբաժինները (չափաբաժիններից ոչ պակաս):

Սննդի պատրաստման ծառայությունների մատուցումն, ըստ քրեակարարողական հիմնարկների, իրականացվել է հետևյալ ժամանակացույցով.

Քրեակարարողական հիմնարկի անվանումը	2020թ.-ի ընթացքում ծառայությունների մատուցման ամիսները նշված է մուգ գույնով											
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
«Արմավիր»												
«Նուբարաշեն»												
«Աբովյան»	-	-										
«Գորիս»	-	-										
«Դատապարտյալների հիվանդանոց»	-	-	-									
«Վարդաշեն»	-	-	-									
«Երևան-Կենտրոն»	-	-	-									
«Հրազդան»	-	-	-	-								
«Սևան»	-	-	-	-								
«Կոշ»	-	-	-	-	-							
«Արթիկ»	-	-	-	-	-							
«Վանաձոր»	-	-	-	-	-							

Հաշվեքննողների մեկնաբանությունները

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՈՂ ՊԱԼԱՏԻ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դատապարտյալներին սննդի տարբեր տեսակների տրամադրման համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերին հաշվարկվել է հիմք ընդունելով քրեակատարողական ծառայության կողմից ներկայացված տվյալները: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ կատարվել է ուսումնասիրություն նաև ընտրանքային կարգով մի շարք քրեակատարողական հիմնարկների համար մեկ ամսվա կաթսայի օրդերների հիման վրա: Արդյունքում նույնպես արձանագրվել են էական անհամապատասխանություններ:

Գնումների ընթացակարգերի վերաբերյալ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչության կողմից հայտարարված «ՀՀ ԱՆ-ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով հայտարարված մրցույթում 130000 լիտր մրգահյութի մատակարարման համար հայտեր են ներկայացրել 7 կազմակերպություններ՝ «Մակրո ֆուդ» ՍՊԸ, «Հավերժ ընկերներ» ՍՊԸ, «Գարդմեն» ՍՊԸ «Ցիկլոիդ» ՍՊԸ, «Դեագա» ՍՊԸ, «Սիս Նատուրալ» ՓԲԸ, և «Գալիման» ՍՊԸ: Մասնակիցներից նվազագույն գին է առաջարկել «Գարդմեն» ՍՊԸ-ն՝ 31,200.0 հազ. դրամ /առանց ԱԱՀ/ կամ 1 լիտրը 288 դրամ և ճանաչվել է հաղթող կազմակերպություն, սակայն 27.04.2018թ. կնքված մրգահյութի մատակարարման «ՀՀ ԱՆ-ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-2» պայմանագրի 1.1 կետով սահմանված հավելված 1-ում /տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում/ նշել է, որ մատակարարելու է «Սիս Նատուրալ» ՓԲԸ-ի արտադրանք, որը գնման ընթացակարգին ներկայացրել է 31,416.6 հազ. դրամի /առանց ԱԱՀ/ կամ 1լ 290 դրամ գնային առաջարկ: Այսպիսով «Սիս Նատուրալ» ՓԲԸ-ն մասնակցելով մրցույթին առաջարկել է ավելի բարձր գին, քան վաճառել է մրցույթում հաղթող ճանաչված «Գարդմեն» ՍՊԸ-ին:

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության կողմից հայտարարված «ՀՀ ԱՆ-ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/18» ծածկագրով հայտարարված մրցույթում 260000 հատ ձվի մատակարարման համար հայտեր են ներկայացրել 5 կազմակերպություններ՝ «Մակրո ֆուդ» ՍՊԸ, «Ցիկլոիդ» ՍՊԸ, «Գալիման» ՍՊԸ, «Գարդմեն» ՍՊԸ և «Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ն: Մասնակիցներից նվազագույն գին է առաջարկել «Մակրո ֆուդ» ՍՊԸ՝ 9,743.5 հազ. դրամ /առանց ԱԱՀ/ կամ 1 հատը 44.97 դրամ և ճանաչվել է հաղթող կազմակերպություն, սակայն 13.04.2018թ. կնքված ձվի մատակարարման «ՀՀ ԱՆ-ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/18-1» պայմանագրի 1.1 կետի

հավելված 1-ում /տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում/ նշել է, որ մատակարարելու է «Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ի արտադրանք, որը գնման ընթացակարգին ներկայացրել է 9,793.3 հազ. դրամի /առանց ԱԱՀ/ կամ 1 հատը 45.2 դրամ գնային առաջարկ:

Այսպիսով «Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ն մասնակցելով մրցույթին առաջարկել է ավելի բարձր գին, քան վաճառել է մրցույթում հաղթող ճանաչված «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ին:

Հարկ է նշել նաև, որ գնման հրավերով և կնքված պայմանագրերի տեխնիկական բնութագրերով սահմանված է եղել, որ մատակարար կազմակերպությունները բոլոր ապրանքները պետք է մատակարարեն ՀՀ տարածքում տեղակայված ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներ, ապրանքների մատակարարումը և բեռնաթափումը պետք է իրականացվի աշխատանքային օրերին ժամը 09.30-ից մինչև 17.00-ն մատակարարների միջոցներով, ուժերով և հաշվին, յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման ժամկետները նախապես պետք է սահմանվի գնորդի կողմից՝ համաձայն բաշխման ցուցակի:

Սակայն քրեակատարողական հիմնարկների կողմից ներկայացված սննդամթերքի շարժի վերաբերյալ տեղեկատվությունից երևում է, որ մատակարար կազմակերպությունները /բացի հացի մատակարարումից/ «Գորիս» և «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկներ չեն իրականացրել մատակարարումներ: «Գորիս» քրեակատարողական հիմնարկ սննդամթերքի մատակարարումները հիմնականում կատարվել են «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկից, իսկ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկ սննդամթերքի մատակարարումները հիմնականում կատարվել են «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկից:

Առկա է անհամապատասխանություն 27.04.2018թ. կնքված մրգահյուրի մատակարարման «ՀՀ ԱՆ-ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-2» պայմանագրի 1.1 կետով սահմանված հավելված 1-ում /տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում/ և 13.04.2018թ. կնքված ձվի մատակարարման «ՀՀ ԱՆ-ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/18-1» պայմանագրի 1.1 կետի հավելված 1-ում /տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում/ նշված մատակարարման վայրերի մասով պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հաշվեքննիչ պալատի կողմից գնումների ընթացակարգերի վերաբերյալ արված արձանագրումներն ամբողջությամբ վերաբերվում են սննդամթերքի ձեռքբերման ընթացակարգերին, որն, ինչպես արդեն նշվել է, **այլևս արդիական չէ՝ սննդամթերքի տրամադրման նոր համակարգ ներդնելու պատճառով** (այլևս սննդամթերքի ձեռքբերում չի իրականացվում):

Արձանագրվածի կապակցությամբ հարկ է նշել նաև, որ՝

1. Քրեակատարողական ծառայության կողմից «ՀՀ ԱՆ-ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի՝ մրգահյուսի չափաբաժնի հաղթող մասնակից է ճանաչվել «Գարդմեն» ՍՊԸ-ն, քանի որ գնային առաջարկը եղել է մյուս մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներից ամենացածրը, մրգահյուսին ամբողջովին համապատասխանել է գնման ընթացակարգի հրավերով սահմանված մրգահյուսի տեխնիկական բնութագրին: Կնքված պայմանագրի հիման վրա «Գարդմեն» ՍՊ ընկերությունը քրեակատարողական հիմնարկներ մատակարարել է «Սիս Նապուրալ» ՓԲ ընկերության կողմից արտադրված մրգահյուս, որը համապատասխանել է պայմանագրով նախատեսված մրգահյուսի տեխնիկական բնութագրին:

2. Քրեակատարողական ծառայության կողմից «ՀՀ ԱՆ-ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/18» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի՝ հավի ձվի չափաբաժնի հաղթող մասնակից է ճանաչվել «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն, քանի որ գնային առաջարկը եղել է մյուս մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներից ամենացածրը, հավի ձուն ամբողջովին համապատասխանել է գնման ընթացակարգի հրավերով սահմանված ձվի տեխնիկական բնութագրին: Կնքված պայմանագրի հիման վրա «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն քրեակատարողական հիմնարկներ մատակարարել է «Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ի կողմից արտադրված հավի ձու, որը համապատասխանել է պայմանագրով նախատեսված ձվի տեխնիկական բնութագրին:

3. Մատակարարների կողմից քրեակատարողական հիմնարկներ սննդամթերքը մատակարարվել է Քրեակատարողական ծառայության իրավասու ստորաբաժանման կողմից կազմված բաշխման ցուցակների հիման վրա՝ հաշվի

առնելով նաև «Գորիս» և «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկների առանձնահատկությունները և մատակարարման ենթակա սննդամթերքների չափաքանակները:

4. Քրեակատարողական ծառայության կողմից բոլոր գնման ընթացակարգերն իրականացվել են համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի և տվյալ ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների:

Հաշվեքննողների մեկնաբանությունները

Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացվել է պարզաբանում արձանագրված փաստերի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկություններ հաշվետու ժամանակաշրջանից հետո սննդի ձեռքբերումների մասով կատարված փոփոխությունների վերաբերյալ:

Էներգետիկ ծառայությունների վերաբերյալ

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության էներգետիկ ծառայությունների մասով տարեկան պլանավորվել է կատարել 655,256.1 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 833,503.8 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 821,743.2 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 777,332.6 հազ. դրամ:

ՀՀ ԱՆ ՔԿՎ-ի և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի միջև 2015թ. և 2016թ. կնքվել է ընդհանուր 2,458,233.0 հազ. դրամի 11 քրեակատարողական հիմնարկներում էներգախնայողության ծրագրերի իրականացման պայմանագրեր /ներառյալ հետագայում համաձայնագրերով կատարված պայմանագրային գումարների փոփոխությունները/, որից 2,258,433.0 հազ. դրամը էներգախնայողության ներդրումների գումարն է, իսկ 199,799,507.0 հազ. դրամը էներգետիկ ծառայությունների մատուցման գումարն է /հավելված 1/: Համաձայն պայմանագրերի էներգախնայողության միջոցառումների աշխատանքները ավարտվել է 2017թ.: Կնքված պայմանագրերի էներգախնայողության աշխատանքների կատարման արդյունքում քրեակատարողական հիմնարկներում ջեռուցման համար սպառվող ջերմային էներգիայի տարեկան սպառումը պետք է նվազեր միջինը 49 %-ով, սակայն 2018թ. էներգախնայողության միջոցառումների իրականացված քրեակատարողական հիմնարկներում էներգիայի սպառումը

նվազել է 44.3%-ով, սակայն էներգախնայողության աշխատանքներ իրականացված 6 քրեակատարողական հիմնարկներում էլեկտրաէներգիայի տարեկան սպառման ծավալը էական գերազանցել է էներգախնայողության աշխատանքներից հետո նախատեսված էլեկտրաէներգիայի ծավալներին, իսկ «Էրեբունի» ՔԿՀ-ում էլ. էներգիայի սպառման ծավալները էական նվազել է հիմնարկի լուծարվելու պատճառով: Այսպես **«Նուբարաշեն»** ՔԿՀ-ում նախատեսված խնայողության 70.5% արդյունքը կազմել է ընդամենը 10%, **«Դատապարտյալների հիվանդանոց»** ՔԿՀ-ում նախատեսված 50.1% արդյունքը կազմել է 38.8%, **«Վարդաշեն»** ՔԿՀ-ում նախատեսված 60.5% արդյունքը կազմել է 18.7%, **«Կոշ»** ՔԿՀ-ում նախատեսված 65.5% արդյունքը կազմել է 38.1%, **«Հրազդան»** ՔԿՀ-ում նախատեսված 37.8% արդյունքը կազմել է 25.6%, **«Սևան»** ՔԿՀ-ում նախատեսված 47.3% արդյունքը կազմել է 20.5%: Անհրաժեշտ է նշել նաև այն փաստը, որ «Էրեբունի» ՔԿՀ-ում էներգախնայողության միջոցառումների կատարման համար կնքվել է 205,402.9 հազ. դրամի պայմանագիր, սակայն «Էրեբունի» Քրեակատարողական հիմնարկը ՀՀ կառավարության 23.04.2014թ. 441-Ն հրամանի համաձայն լուծարվել է և այնտեղ դատապարտյալներ չեն պահվում: ՀՀ ԱՆ «Էրեբունի» ՔԿՀ-ի նախկին տարածքում այժմ ծառայություն են իրականացնում ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի հատուկ նշանակության բաժինը, պահպանության ապահովման բաժինը և ուղեկցումների բաժինը՝ ընդհանուր 84 աշխատակիցներ: Համաձայն կնքված պայմանագրերի վճարման ժամանակացույցի Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամին 2018թ. համար պետք է վճարվեր 286,453.0 հազ.դրամ գումար, սակայն փոխանցվել է 270,275.9 հազ. դրամ, իսկ մնացած գումարը վճարվել է 2017թ. որպես կանխավճար: Աղյուսակ 4-ում ներկայացված է 2016-2018թթ 4212 հոդվածով էներգետիկ ծառայությունների համար ՔԿԾ-ի կողմից վճարված գումարները, որտեղից պարզ երևում է, որ էներգախնայողության աշխատանքների արդյունքում ակնկալվող էներգետիկ ծառայությունների համար վճարվող գումարի նվազման փոխարեն 2017թ. ավելացել է 305,999.6 հազ. դրամով, իսկ 2018թ.՝ 166,487.1 հազ. դրամով:

4212 հոդված				հազ. դրամ
Տարեթիվ	Տարեկան պ սն	Տարեկան ճշտված պ սն	Փառտ	Փաստացի ծախսի տարեկան պ սնի տարբերություն
2016	695,020.8	655,086.5	654,463.0	-40,557.8
2017	655,256.1	961,256.1	961,255.7	305,999.6
2018	655,256.1	833,503.8	821,743.2	166,487.1

03.10.2018թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կատարվել է քրեակատարողական ծառայության բյուջեի վերաբաշխում, որով «էներգետիկ ծառայություններ» 4212 հոդվածին հատկացվել է 76,163.0 հազ. դրամ, որի անհրաժեշտությունը քրեակատարողական հիմնարկի կողմից ներկայացրած տեղեկանք հիմնավորման համաձայն պայմանավորված է եղել ՔԿՀ-ներում տեղակայված նոր էլեկտրասարքավորումների ավելացմամբ, այնտեղ պահվող դատապարտյալների և կալանավորված անձանց կոմունալ կենցաղային պայմանների բարելավման, ինչպես նաև ՔԿՀ-ների ընդլայնվող տնտեսական կարիքների համար մեծ քանակությամբ էլեկտրասարքավորումների /սառնարաններ, օդորակիչներ, հովացուցիչներ, ջրի պոմպեր/ շահագործմամբ պայմանավորված էլեկտրաէներգիայի ծախսի ավելացմամբ առաջացած կուտակված պարտքերը վճարելու անհրաժեշտությամբ:

Հատկանշական է նաև 12.12.2018թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կատարվել է քրեակատարողական ծառայության բյուջեի վերաբաշխում, որով ամբողջությամբ նույն հիմնավորվամբ կրկին «էներգետիկ ծառայություններ» 4212 հոդվածին հատկացվել է 102,084.7 հազ. դրամ գումար:

Այսպիսով վերոգրյալը հիմք է հանդիսանում արձանագրելու, որ առկա է անհամապատասխանություն ՀՀ ԱՆ ՔԿՎ-ի և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի միջև 2015թ. և 2016թ. կնքված ընդհանուր 2,458,233.0 հազ. դրամի 11 քրեակատարողական հիմնարկներում էներգախնայողության ծրագրերի իրականացման պայմանագրերով սահմանված էներգախնայողության պահանջների մասով:

Համաձայն նշված պայմանագրերի էներգախնայողության միջոցառումների աշխատանքները ավարտվել է 2017թ.: Կախված աշխատանքների կատարման հաջորդականությունից վճարումները սկսել են իրականացնել

2016 թվականի վերջերից և ամբողջությամբ՝ բոլոր քրեակատարողական հիմնարկների մասով՝ 2018 թվականի հունվարից: Ըստ ժամանակացույցի վճարումները պետք է կատարվեն մինչև 2025 թվականը:

Հաշվեքնության օբյեկտի արձագանքը

Քրեակատարողական ծառայության և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի հետ կնքված պայմանագրերի վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի ներկայացրած հավելված 17-ում առկա են անճշտություններ:

Մասնավորապես՝

Կազմված աղյուսակում նշված էԽՄ-ից առաջ և էԽՄ-ից հետո Քրեակատարողական ծառայությունում սպառված էլեկտրաէներգիայի քանակները վերաբերում են ջեռուցման, տաք ջրամատակարարման և լուսավորության ապահովման ընթացքում սպառված էներգետիկ ծախսերին, որոնք ամրագրված են պայմանագրերում: Այդ ծախսերի ընդհանուր քանակը կազմում է Քրեակատարողական ծառայությունում էներգետիկ տարեկան ամբողջ ծախսերի միայն որոշակի մասը, իսկ մյուս մասը կազմող էլեկտրական սարք-սարքավորումները ներառված չեն այդ ցանկում: Ներկայացված աղյուսակի վերջին սյունակում հաշվարկված է էներգախնայողության միջոցառումներից հետո՝ 2018 թվականի ընթացքում Քրեակատարողական ծառայությունում էներգախնայողության միջոցառումների արդյունավետության տոկոսային արժեքները, սակայն հաշվի չի առնված այն հանգամանքը, որ 2018 թվականի ընթացքում էներգետիկ ծախսերի տարեկան ընդհանուր քանակը համեմատվել է ԷԽՄ-ից առաջ էներգետիկ ծախսերի տարեկան ընդհանուր քանակի միայն որոշակի մասի հետ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ներկայացվում է ԷԽՄ-ից առաջ՝ 2015 թվականի և ԷԽՄ-ից հետո՝ 2018 թվականի ընթացքում Քրեակատարողական ծառայությունում սպառված տարեկան ընդհանուր էլեկտրաէներգիայի և գազի քանակները:

«Արմավիր» քրեակադրոդական հիմնարկում էլեկտրաէներգիայի ծախսերի տարբերությունը ԷԽՄ-ից առաջ և հետո կազմում է -73%, քանի որ կալանավորված անձանց և դատապարտյալների տարեկան միջին քանակը 2015 թվականին կազմել է 200, իսկ 2018 թվականին՝ 669: Հիմնարկում էներգախնայողության միջոցառումներից առաջ ջեռուցման և տաք ջրամատակարարման ապահովման համար կառուցված էր կաթսայատուն, որը շահագործվում էր:

«Վանաձոր» քրեակադրոդական հիմնարկում էլեկտրաէներգիայի ծախսերի տարբերությունը ԷԽՄ-ից առաջ և հետո կազմում է -13%, քանի որ պայմանագրով կենտրոնական ջեռուցում նախատեսված չի եղել ոչ բոլոր մասնաշենքերի և դրանց տեղամասերի համար (հերթապահ խմբի և պահեստային մասնաշենքեր, հսկիչ անցագրային կետ, հանձնուքների ընդունման սենյակ, տեսակցության սենյակներ և այլն): Այդ տարածքները ներկայումս ջեռուցվում են էլեկտրական սարք-սարքավումների միջոցով: Հիմնարկում էներգախնայողության միջոցառումներից առաջ ջեռուցման և տաք ջրամատակարարման ապահովման համար կառուցված էր կաթսայատուն, որը շահագործվում էր:

«Հրազդան» քրեակադրոդական հիմնարկում էլեկտրաէներգիայի ծախսերի տարբերությունը ԷԽՄ-ից առաջ և հետո կազմում է -1, քանի որ էներգախնայողության նպատակով նախատեսված արևային ջրատաքացուցիչները տեղակայված են մասնաշենքի տանիքում, դրանց տեխնիկական սպասարկման համար առաջանում են դժվարություններ և պակասում է էներգախնայողության միջոցառումների արդյունավետությունը: Հիմնարկում էներգախնայողության միջոցառումներից առաջ ջեռուցման և տաք ջրամատակարարման ապահովման համար կառուցված էր կաթսայատուն, որը շահագործվում էր:

«Դատապարտյալների հիվանդանոց», «Նուբարաշեն», «Սևան», «Վարդաշեն», «Էրեբունի» և «Կոշ» քրեակադրոդական հիմնարկներում էներգախնայողության միջոցառումների արդյունքում ջեռուցման և տաք ջրամատակարարման ապահովման համար կառուցվել և շահագործվում են

կաթսայատներ, որոնք նախկինում չեն եղել: Նախկինում հիմնարկներում ջեռուցումը և տաք ջրամատակարարումը իրականացվել է էլեկտրական սարք-սարքավորումների միջոցով:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկում էներգախնայողության միջոցառումներից առաջ կառուցված կաթսայատներից ջեռուցումը և տաք ջրամատակարարումն իրականացվել է միայն մեկուսարանի մասնաշենքում, իսկ մյուս մասնաշենքերում ջեռուցումը և տաք ջրամատակարարումն իրականացվել է էլեկտրական սարք-սարքավորումների միջոցով: Էներգախնայողության միջոցառումների արդյունքում ներկայումս իրականացվում է մասնաշենքերի կենտրոնացված ջեռուցումը և տաք ջրամատակարարումը:

Այսպիսով, էներգախնայողության միջոցառումների արդյունքում կենտրոնական ջեռուցումով ապահովվել են քրեակատարողական հիմնարկների ոչ բոլոր մասնաշենքերը և տեղամասերը, ինչի պատճառով ջեռուցումն իրականացվել է էլեկտրական սարք-սարքավորումների միջոցով: Դա, իր հերթին, հանգեցրել է սպառվող էլեկտրաէներգիայի քանակի աճի և էներգախնայողության միջոցառումների արդյունավետության նվազման: Էլեկտրաէներգիայի քանակի ավելացման պատճառ է հանդիսացել նաև քրեակատարողական հիմնարկներում էներգախնայողության միջոցառումների արդյունքում ջեռուցումը և տաք ջրամատակարարումն ապահովելու նպատակով տեղակայված մեծ թվով ջրի պոմպերի և այլ էլեկտրական սարք-սարքավորումների շահագործումը:

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության 2015թ.-ի և 2018թ.-ի ընթացքում
էլեկտրաէներգիայի տարեկան ծախսերը / կվտ.ժ /

Հ/Հ	Քրեակատարողական հիմնարկի անվանումը	ԷԽՄ-ից առաջ՝ 2015թ.	ԷԽՄ-ից հետո՝ 2018թ.	Տարբերությունը %
1.	«Էրեբունի»	135 402	115 978	14
2.	«Սևան»	2 478 678	1 592 974	36
3.	«Կոշ»	2 056 718	1 027 882	50

4.	«Արթիկ»	1 278 340	1 095 403	14
5.	«Աբովյան»	804 690	404 961	50
6.	«Դալ. հիվանդանոց»	1 213 560	753 320	38
7.	«Նուբարաշեն»	2 566 171	1 709 873	33
8.	«Վանաձոր»	401 323	453 328	-13
9.	«Վարդաշեն»	869 080	483 840	44
10.	«Հրազդան»	434 000	438 800	-1
11.	«Արմավիր»	572 758	991 033	-73
	Ընդամենը	12 810 720	9 067 392	29

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունում 2015թ.-ի և 2018թ.-ի ընթացքում
բնական գազի տարեկան ծախսերը / մ³ /

Հ/Հ	Քրեակատարողական հիմնարկի անվանումը	ԷԽՄ-ից առաջ՝ 2015թ.	ԷԽՄ-ից հետո՝ 2018թ.	Տարբերությունը %
1.	«Էրեբունի»	0	12 995	----
2.	«Սևան»	0	108 563	----
3.	«Կոշ»	0	68 517	----
4.	«Արթիկ»	209 440	197 582	6
5.	«Աբովյան»	62 900	108 066	-72
6.	«Դալ. հիվանդանոց»	0	56 501	----
7.	«Նուբարաշեն»	0	62 136	----
8.	«Վանաձոր»	65 554	70 665	-8
9.	«Վարդաշեն»	0	23 473	----
10.	«Հրազդան»	40 382		7

			37 445	
11.	«Արմավիր»	139 116	203 368	-46
	Ընդամենը	517 392	949 311 (617 126)	-19

Հաշվեքննողների արձագանքը

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ էներգախնայողության աշխատանքների կատարման արդյունքում քրեակատարողական հիմնարկներում ջեռուցման համար սպառվող ջերմային էներգիայի տարեկան սպառումը պետք է նվազեր միջինը 49 %-ով, սակայն 2018թ. էներգախնայողության միջոցառումների իրականացված քրեակատարողական հիմնարկներում էներգիայի սպառումը նվազել է 44.3%-ով: Մինևույն ժամանակ էներգախնայողության աշխատանքների արդյունքում ակնկալվող էներգետիկ ծառայությունների համար վճարվող գումարը նվազման փոխարեն 2017թ. ավելացել է 305,999.6 հազ. դրամով, իսկ 2018թ. 166,487.1 հազ. դրամով: Ձեր կողմից ներկայացված նկատառումները վերաբերվում են էներգախնայողության միջոցառումների աշխատանքներից հետո ՔԿՀ-ներում նոր էլեկտրասարքավորումների ավելացմանը, որոնք ավելացնում են էլեկտրաէներգիայի սպառումը: Հարկ է նշել, որ նշված պատճառաբանությունը լիարժեք չի կարող հիմք հանդիսանալ էներգախնայողությունների աշխատանքները կատարելուց հետո ոչ միայն անհրաժեշտ արդյունքի չհասնելու համար, այլև նույնիսկ հարկ է նշել, որ այդ պարագայում ծախսերը ավելացել են: Ավելին էներգախնայողության աշխատանքների արդյունքում տարբեր քրեակատարողական հիմնարկներում փաստացի իրարից էականորեն տարբերվող արդյունքներ են ստացվել: Մասնավորապես Ձեր կողմից ներկայացվել է, որ «Դատապարտյալների հիվանդանոց», «Նուբարաշեն», «Սևան», «Վարդաշեն», «Էրեբունի» և «Կոշ» քրեակատարողական հիմնարկներում էներգախնայողության միջոցառումների արդյունքում ջեռուցման և տաք ջրամատակարարման ապահովման համար կառուցվել և շահագործվել են կաթսայատներ: Չնայած հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ

աշխատանքները կատարվել են էներգախնայողության միջոցառումների արդյունքում և արդեն իսկ պետք է ազդեին էներգախնայողության պահանջվող ցուցանիշներին հասնելուն, նշված քրեակատարողական հիմնարկներում էներգախնայողության միջոցառումների արդյունքները էականորեն տարբերվել են միմյանցից: Մասնավորապես «Նուբարաշեն» ՔԿՀ-ում նախատեսված խնայողության 70.5% արդյունքը կազմել է ընդամենը 10%, «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում նախատեսված 50.1% արդյունքը կազմել է 38.8%, «Վարդաշեն» ՔԿՀ-ում նախատեսված 60.5% արդյունքը կազմել է 18.7%, «Սևան» ՔԿՀ-ում նախատեսված 47.3% արդյունքը կազմել է 20.5%: Անհրաժեշտ է նշել նաև այն փաստը, որ «Էրեբունի» ՔԿՀ-ում էներգախնայողության միջոցառումների կատարման համար կնքվել է 205,402,925 դրամի պայմանագիր, սակայն «Էրեբունի» Քրեակատարողական հիմնարկը ՀՀ կառավարության 23.04.2014թ. 441-Ն հրամանի համաձայն լուծարվել է և այնտեղ դատապարտյալներ չեն պահվում:

Կոմունալ ծառայությունների վերաբերյալ

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կոմունալ ծառայությունների մասով տարեկան պլանավորվել է կատարել 43,169.5 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 97,169.5 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 92,844.9 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 86,203.7 հազ. դրամ:

2018թ. կոմունալ ծառայություններ հոդվածի համար նախատեսված 43,169.5 հազ. դրամից՝ 38,869.5 հազ. դրամը նախատեսվել է խմելու ջրի ծախսի համար: Սակայն 03.10.2018թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կատարվել է քրեակատարողական ծառայության բյուջեի վերաբաշխում, որով «կոմունալ ծառայություններ» 4213 հոդվածին հատկացվել է 30,000.0 հազ. դրամ, որի անհրաժեշտությունը քրեակատարողական հիմնարկի կողմից ներկայացրած տեղեկանք հիմնավորման համաձայն պայմանավորված է եղել ՔԿՀ-ներում պահվող ազատազրկվածների կոմունալ-կենցաղային պայմանների /վացք, բաղնիք/, սանիտարահիգիենիկ վիճակի բարելավման նպատակով, ինչպես նաև, ՔԿՀ-ներում հին և վթարային վիճակում գտնվող ջրամատակարարման համակարգեր ունենալու հետևանքով ավելացած օգտագործվող խմելու ջրի քանակով: Նաև տեղեկանք հիմնավորման մեջ նշվել է, որ ՔԿՀ-ների կողմից խմելու ջրի ծախսի ներկայիս մակարդակի պայմաններում տարեկան ծախսը կկազմի 448,000 մ³ կամ 81,088.0 հազ. դրամ:

[ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ](#)

Դիտարկելով տեղեկանք-հիմնավորման մեջ գրված ջրի 2018թ. տարեկան ծախսի կանխատեսվող ծավալը, պետք է փաստել մի բան, որ հաշվի առնելով ՔԿՀ-ներում պահվող դատապարտյալների և կալանավորների միջին տարեկան թիվը /3128 անձ/, ստացվում է, որ յուրաքանչյուր դատապարտյալին և կալանավորին բաժին ընկնող խմելու ջրի 1 օրվա ծախսը կազմում է $448000/3128/365=392$ լ:

12.12.2018թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կատարվել է քրեակատարողական ծառայության բյուջեի վերաբաշխում, որով նույն հիմնավորվամբ կրկին «կոմունալ ծառայությունների» 4213 հոդվածին հատկացվել է 24,000.0 հազ. դրամ գումար:

2016-2018թթ Քրեակատարողական հիմնարկներին հատկացված «կոմունալ ծառայություններ» հոդվածով նախատեսված և հատկացված գումարները ներկայացված է աղյուսակ 5-ում:

Աղյ ու սակ 5

4213 հոդված				հազ. դրամ
Տարեթիվ	Տարեկան պ սն	Տարեկան ճշտված պ սն	Փաստ	Տարբերություն
2016	43,563.00	89,163.00	84,956.33	41,393.3
2017	43,169.50	92,169.50	89,668.80	46,499.3
2018	43,169.50	97,169.50	92,844.96	49,675.5

Համաձայն ՀՀ կառավարության «ՀՀ ԱՆ ՔԿ Ծառայության կոմունալ ծախսերի նորմաները հաստատելու մասին» 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի ա) ենթակետի քրեակատարողական հիմնարկների համար, ներառյալ դրանց աշխատակազմերը, մեկ դատապարտյալին կամ կալանավորվածին պահելու համար խմելու ջրի և ջրահեռացման համար սահմանված է օրական 180լ ծախս /տարեկան կազմում է $0.18\text{մ}^3 \cdot 365\text{օր}=65.7\text{մ}^3$: Հետևաբար, հաշվի առնելով ՔԿՀ-ներում պահվող դատապարտյալների և կալանավորների 2018թ. միջին տարեկան թիվը /3128 անձ/, ջրի ծախսը պետք է կազմեր $3128 \cdot 365 \cdot 0.18\text{մ}^3=205,510 \text{ մ}^3$:

2018թ փաստացի ջրի ծախսը կազմել է 488,454մ³, կամ 1 դատապարտյալի կամ կալանավորված անձով հաշվարկված օրական 427.8լ, ինչը մոտ 2.37 անգամ ավել է սահմանված նորմից: Հավելված 2-ում ներկայացված է 2018թ. քրեակատարողական

հիմնարկներում ջրի ծախսը: Հավելվածից երևում է, որ ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի ա) ենթակետով սահմանված՝ մեկ դատապարտյալին կամ կալանավորվածին պահելու համար խմելու ջրի և ջրահեռացման համար նախատեսված սահմանաչափից միայն «Գորիս» և «Արմավիր» ՔԿՀ-ներում է ջրի ծախսը քիչ կազմել, մնացած հիմնարկներում ծախսը գերազանցել է նախատեսված սահմանաչափերը: Այսպես՝ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում՝ 12.1 անգամ, «Աբովյան» ՔԿՀ-ում 6.5 անգամ, «Արթիկ» ՔԿՀ-ում՝ 3.8 անգամ, «Վարդաշեն» ՔԿՀ-ում 3.8 անգամ, «Կոշ» և «Հրազդան» ՔԿՀ-ներում 2.1 անգամ, «Նուբարաշեն» ՔԿՀ-ում 1.5 անգամ, իսկ «Վանաձոր» և «Սևան» ՔԿՀ-ներում 1.3 անգամ:

Այսպիսով առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. «ՀՀ ԱՆ ՔԿ Ծառայության կոմունալ ծախսերի նորմաները հաստատելու մասին» թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի ա) ենթակետի համաձայն քրեակատարողական հիմնարկների համար, ներառյալ դրանց աշխատակազմերը, մեկ դատապարտյալին կամ կալանավորվածին պահելու համար խմելու ջրի և ջրահեռացման համար սահմանված նորմաների և կատարված փաստացի ծախսերի միջև:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

2018 թվականի ընթացքում Քրեակատարողական ծառայությունում խմելու ջրի ծախսերի վերաբերյալ արձանագրության հավելված 18-ի աղյուսակի վերջին սյունակում նշված չէ մեկ կալանավորված անձի և դատապարտյալի խմելու ջրի օրական միջին ծախսի չափման միավորը: Նույն աղյուսակի նախավերջին սյունակում՝ 1 կալանավորված անձի և դատապարտյալի խմելու ջրի տարեկան միջին ծախսը կազմում է 157,9 մ³ (աղյուսակում նշված է 156,2 մ³), իսկ վերջին սյունակում՝ 1 կալանավորված անձի և դատապարտյալի խմելու ջրի օրական միջին ծախսը կազմում է 432,6լ (աղյուսակում նշված է 427,8լ.):

Հաշվեքննողների մեկնաբանությունները

Թիվ 18 հավելվածի /ընթացիք եզրակացությունում՝ 2 հավելված/ վերջին սյունակում ավելացրել ենք չափի միավորը՝ լիտր: Իսկ ինչ վերաբերվում է խմելու ջրի տարեկան միջին թվի և միջին օրական ծախսերի վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի տվյալներին, ապա նշենք, որ ներկայացված չէ այն ելակետային տվյալները, որը հիմք է հանդիսացել նշված թվերը ստանալու համար: Միևնույն ժամանակ նշենք, որ

նշված թվերի փոփոխությունները մեր կողմից կատարված դատողությունների մասով որևէ ազդեցություն չեն ունենում:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության գործունեության մասով հարուցվել է քրեական գործ, որի նախաքննությունը իրականացնում է ՀՀ հատուկ քննչական ծառայությունը: Քննիչի 22.10.2019թ. առգրավում կատարելու մասին որոշման 1-ին կետի հիման վրա քրեակատարողական ծառայությունից առգրավվել է 2016-2018թթ. ընթացքում քրեակատարողական ծառայության կարիքների համար անցկացված մրցույթներին վերաբերող բոլոր փաստաթղթերը:

Հաշվի առնելով վերոգրյալը հաշվեքննությունն իրականացվել է ծառայությունում առկա փաստաթղթերի և հնարավոր հասանելի այլ տեղեկատվության հիման վրա:

«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամ

Հիմնադրամը ստեղծվել է ՀՀ կառավարության 22.09.2001թ. թիվ 888 որոշմամբ, որով հաստատվել է վերջինիս կանոնադրությունը: Կանոնադրությունը նոր խմբագրությամբ գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Սպանդարյանի տարածքային բաժնի կողմից 26.12.2016թ.: Հիմնադրամի հիմնադիրն է Հայաստանի հանրապետությունը՝ ի դեմս ՀՀ կառավարության, պետական լիազորված մարմինը՝ ՀՀ արդարադատության նախարարությունը: Կանոնադրության 2.2 կետի («Հիմնադրամի գործունեության առարկան և նպատակները») համաձայն՝

Հիմնադրամի հիմնական նպատակներն են՝

- **Դատապարտյալների աշխատանքային զբաղվածության ապահովումը**
- **Քրեակատարողական ծառայության սոցիալական ոլորտի զարգացումը**
- **Քրեակատարողական ծառայության ուղղիչ հիմնարկների տնտեսական և կենցաղային պայմանների զարգացումը**

- **Քրեակարարողական ծառայության աշխատողների մասնագիտական մակարդակի բարձրացումը**
- **Դատապարտյալների կրթական մակարդակի բարձրացումը**

Հիմնադրամի գործող կանոնադրության 2.3 կետի համաձայն՝ հիմնադրամը կարող է իրականացնել օրենքով չարգելված, կանոնադրությամբ սահմանված ցանկացած տնտեսական գործունեություն: Հիմնադրամը կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ միայն այն դեպքում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար ստեղծվել է Հիմնադրամը և համապատասխանում է այդ նպատակներին:

2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ հիմնադրամի դրամական միջոցների մնացորդը կազմել է 34,989.0 հազ. դրամ, որից՝ հաշվարկային հաշվում՝ 34,481.8 հազ. դրամ, դրամարկղում՝ 507.2 հազ. դրամ: Տարվա ընթացքում հաշվարկային հաշվին մուտք է եղել 372,636.5 հազ. դրամ և ելքագրվել է 380,752.4 հազ. դրամ, մնացորդը՝ 31.12.2018 թվականի դրությամբ կազմել է 26,365.9 հազ. դրամ: 2018 թվականի ընթացքում դրամարկղ է մուտքագրվել 45,491.6 հազ. դրամ, որից 24,950.0 հազ. դրամը դրամարկղ է մուտքագրվել հաշվարկային հաշվից, մնացորդը՝ 31.12.2018 թվականի դրությամբ կազմել է 21.1 հազ. դրամ:

2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ հիմնադրամի դրամական միջոցների մնացորդը կազմել է 26,387.0 հազ. դրամ, որից՝ հաշվարկային հաշվում՝ 26,365.9 հազ. դրամ, դրամարկղում՝ 21.1 հազ. դրամ: 2019թ. 1-ին եռամսակի ընթացքում հաշվարկային հաշվին մուտք է եղել 31,300.2 հազ. դրամ և ելքագրվել է 52,949.4 հազ. դրամ, մնացորդը՝ 31.03.2019 թվականի դրությամբ կազմել է 4,716.7 հազ. դրամ: 2019թ. 1-ին եռամսակի ընթացքում դրամարկղ է մուտքագրվել 14,920.7 հազ. դրամ, որից 9,500.0 հազ. դրամը դրամարկղ է մուտքագրվել հաշվարկային հաշվից, մնացորդը՝ 31.03.2019 թվականի դրությամբ կազմել է 673.1 հազ. դրամ:

ՀՀ ԱՆ ՔԿԾ-ի և հիմնադրամի միջև կնքված հանդերձանքի և անկողնային պարագաների մատակարարման պայմանագրի վերաբերյալ

ՀՀ ԱՆ ՔԿԾ-ի և Հիմնադրամի միջև 2018 թվականի ապրիլի 20-ին կնքվել է «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» թիվ ՀՀ ԱՆ ՔԿԿ-ՄԱ-ԱՊԶԲ-18/2 պայմանագիրը, համաձայն որի՝ Հիմնադրամը պետք է մատակարարի ընդհանուր 169,893.4 հազ. դրամի հանդերձանք և անկողնային պարագաներ: Վերոնշյալ պայմանագրով նախատեսված պարտավորությունների

կատարումն ապահովելու նպատակով՝ չունենալով նշված արտադրանքներ արտադրելու հնարավորություններ, հիմնադրամը մեկ ամիս անց՝ 2018 թվականի մայիսի 14-ին, «Մասիս գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հետ կնքել է կապալի պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ կապալառուն պարտավորվում է իրականացնել պայմանագրի հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրերով նախատեսված կտորեղենի ձևվածքների և կիսաֆաբրիկատների պատրաստման աշխատանքներ, սակայն տեխնիկական բնութագրերում ներկայացված է պատրաստի արտադրանքների ամբողջական նկարագիր: Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է 137,490.7 հազ. դրամ: Պայմանագրերի գների տարբերությունը կազմում է 32,402.7 հազ. դրամ: Ըստ էության նույն քանակության, նույն տեխնիկական բնութագրերով պատրաստի արտադրանքը հնարավոր էր ձեռք բերել այլ կազմակերպությունից: ՔԿ ծառայությունը 2018 թվականին փոխանցել է ամբողջ պայմանագրի արժեքը, որից 50,000.0 հազ. դրամը՝ որպես կանխավճար: Մատակարարումների ընթացքում ուշացումների և պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանելու պատճառով, պայմանագրին համապատասխան, ՔԿ ծառայության կողմից 2018 թվականին հիմնադրամից գանձվել է 2,649.5 հազ. դրամի տույժ և տուգանքներ: 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՔԿ ծառայությանը պակաս է մատակարարվել 18,156.2 հազ. դրամի արտադրանք, որը մատակարարվել է հունվար ամսվա ընթացքում: Ընդ որում, հիմնադրամի տեղեկատվության համաձայն՝ 31.03.2019թ. դրությամբ Քրեակատարողական ծառայության նկատմամբ հանդերձանքի մասով կրեդիտորական պարտքը /ստացված կանխավճար/ կազմել է 349.6 հազ. դրամ: «Մասիս գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից 2018 թվականի ընթացքում մատակարարված 117,428.3 հազ. դրամ արտադրանքի դիմաց հիմնադրամը 01.01.2019թ. դրությամբ պայմանագրով ստանձնած պարտավորությունը ամբողջապես չի կատարել՝ վճարել է ընդամենը 104,000 հազ. դրամ, պարտքը կազմել է 13,428.3 հազ. դրամ, իսկ 2019թ. առաջին եռամսյակում ՍՊԸ-ն մատակարարել է 10,952.0 հազ. դրամի արտադրանք, հիմնադրամը վճարել է ՍՊԸ-ին 14,500.0 հազ. դրամ, հիմնադրամի կրեդիտորական պարտքը «Մասիս գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի նկատմամբ 31.03.2019թ դրությամբ կազմել է 9,880.3 հազ. դրամ: 31.03.2019 թվականից հետո ՍՊԸ-ի կողմից այլ մատակարարումներ չեն իրականացվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված է, որ **«Գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե՝ 1) գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ»:** ՀՀ

կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 23.4 կետով սահմանված են այն գնումները, որոնք կարող են կատարվել օրենքի 23-րդ հոդվածի 1.1 մասի հիման վրա՝ հատուկ կամ բացառիկ առկայության հիմքով, որի 17-րդ տողով սահմանված է հիմնադրամից մեկ անձից գնման պայմանները՝ «քրեակատարողական ծառայության կարիքների համար «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված հիմնադրամի արտադրած ապրանքների, կատարած աշխատանքների և մատուցած ծառայությունների ձեռքբերում՝ պայմանով, որ գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գները պետք է հավասար կամ ցածր լինեն դրանց շուկայական գներից»: Արդյունքում ստացվում է, որ նույն տեխնիկական բնութագրերով, նույն քանակությամբ հանդերձանք և անկողնային պարագաներ հնարավոր էր ձեռք բերել 137,490.7 հազ. դրամ արժեքով 169,893.4 հազ. դրամի փոխարեն՝ 32,402.7 հազ. դրամ ավելի էժան:

Առկա է անհամապատասխանություն՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 23.4 կետի 17-րդ տողով սահմանված պահանջների մասով:

Հարկ է նշել, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունը 09.02.2018թ. թիվ 40/11-620 գրությամբ հարցում է կատարել հիմնադրամին այն մասին, որ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2018 թվականի անհրաժեշտ գնումների գործընթացը կազմակերպելու նպատակով, ինչպես նաև առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման, թիվ 1 հավելվածի 23.4 կետով ներկայացված աղյուսակի 17-րդ կետի պահանջներով, խնդրել են տրամադրել տեղեկություն ծառայությանը, թե ներկայացված ցանկից որ գնման առարկան է հնարավոր ձեռք բերել հիմնադրամի կողմից՝ համաձայն վերը նշված որոշման պահանջների համապատասխան: Ի պատասխան նշված գրության, հիմնադրամի գլխավոր տնօրենը 15.02.2018թ. թիվ ԱԴ-2 գրությամբ ներկայացրել է քրեակատարողական վարչությանը մատակարարվելիք ապրանքների ցանկը, որոնք արտադրվելու են հիմնադրամի կողմից և մատակարարվելու են ըստ պահանջարկի: Այդ ցանկում այլ ապրանքների հետ միասին ընդգրկվել է դատապարտյալների հանդերձանքը, անկողնային պարագաները և հացը:

«Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով սահմանված է, որ «Դատապարտյալների զբաղվածությունն ապահովելու, դատապարտյալներին և կալանավորվածներին պահելու պայմանները բարելավելու, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների սոցիալական, մշակութային ոլորտները

զարգացնելու նպատակով քրեակատարողական ծառայության համակարգում Հայաստանի Հանրապետության կառավարությունն ստեղծում է հիմնադրամ, որը գործում է հիմնադրամի կանոնադրության համաձայն»:

Միևնույն ժամանակ, Հիմնադրամի կանոնադրության 2.2 կետով սահմանված հիմնադրամի գործունեության նպատակներից է «Դատապարտյալների աշխատանքային զբաղվածության ապահովումը»: Ընդ որում՝ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ի և Հիմնադրամի միջև 2018 թվականի ապրիլի 20-ին կնքված «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» թիվ ՀՀ ԱՆ ՔԿՎ-ՄԱ-ԱՊՁԲ-18/2 պայմանագրով սահմանված 169,893.4 հազ. դրամ արժեքով հանդերձանքի և անկողնային պարագաների մատակարարման գործընթացում, համաձայն հիմնադրամի եկամտային հարկի և սոցիալական վճարի 2018 թվականի ամսական հաշվարկների, հիմնադրամի «Աբովյան» մասնաճյուղի կարի արտադրամասում որպես աշխատող ներգրավվել է 24 դատապարտյալ /23 կարող բանվորներ և 1 հավաքարար/, ընդ որում՝ մարտ ամսին՝ 1 կարող բանվոր, ապրիլին՝ 1, մայիսին՝ 2, հունիսին՝ 14, հուլիսին՝ 19, օգոստոսին՝ 21, սեպտեմբերին՝ 19, հոկտեմբերին՝ 13, նոյեմբերին՝ 6 կարող բանվորներ, 2019 թվականի հունվար՝ կարող բանվոր չի եղել, փետրվար՝ 2, մարտ՝ 2 կարող բանվոր:

Առկա է անհամապատասխանություն՝ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ի և Հիմնադրամի միջև 2018 թվականի ապրիլի 20-ին կնքված «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» թիվ ՀՀ ԱՆ ՔԿՎ-ՄԱ-ԱՊՁԲ-18/2 պայմանագրով կատարված գործարքի և «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով սահմանված նպատակների հետ:

Միևնույն ժամանակ առկա է անհամապատասխանություն՝ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ի և Հիմնադրամի միջև 2018 թվականի ապրիլի 20-ին կնքված «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» թիվ ՀՀ ԱՆ ՔԿՎ-ՄԱ-ԱՊՁԲ-18/2 պայմանագրով կատարված գործարքի և հիմնադրամի Կանոնադրության 2.2 կետով սահմանված հիմնական նպատակների հետ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը՝

Ստուգվող ժամանակահատվածում ՔԿՀ տարածքում կազմակերպված կարի արտադրամասում իրականացվել է մատակարարվող ձևածքների կարը, ինչպես նաև՝ պարտաստի ստացված արտադրանքի պիտակավորումն ու փաթեթավորումը, դատապարտյալների հնարավորությունների սահմաններում:

Նշված աշխատանքներում ներգրավված են եղել ավելի քան 20 կին դատապարտյալներ, նրանց վճարվել է աշխատավարձ, որոնք հաստատվում են համապատասխան փաստաթղթերով:

Պատրաստի ապրանքների և ծնածքների՝ հիմնադրամին մատակարարման և ՔԿԾ-ին վաճառքի գների տարբերության արդյունքում ստացված ֆինանսական միջոցներն ուղղվել են նշված մասով կարի գործընթացի, դատապարտյալների զբաղվածության և աշխատավարձերի վճարմանը, արտադրական համապատասխան ծախսերի ֆինանսավորմանը՝ առանց որի հնարավոր չէր լինի ապահովել վերը նշված աշխատանքների կատարումը: Այս պարագայում սխալ է ենթադրել, որ նույն տեխնիկական բնութագրերով, նույն քանակությամբ հանդերձանք և անկողնային պարագաներ հնարավոր էր ձեռք բերել 137.490.7 հազ. դրամ արժեքով 169.893.4 հազ. դրամի փոխարեն՝ 32,402.7 հազ. դրամ ավելի էժան:

Տեղեկացնում ենք նաև, որ 2019-2020թթ կնքված պայմանագրերի շրջանակներում, որոնց ծավալները 3-6 անգամ նվազել են, պահպանելով նույն գները, պատրաստի արտադրանքը ամբողջությամբ ստացվել է հիմնադրամի կարի արտադրամասերում, աշխատանքներում ներգրավելով ինչպես դատապարտյալների, այնպես էլ անհատ ծառայություն մատուցողների:

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկայի նկատմամբ չկատարված պարտավորություն չի եղել 31.12.2018 թվականի դրությամբ, քանի որ 13,428.3 հազ պարտքն առաջացել է 27 դեկտեմբերի 2018 թվականին, որը պետք է մարվեր 15 աշխատանքային օրվա ընթացքում: Նշված պարտքը մարվել է 2019 թվականի հունվար ամսվա մեջ:

Հաշվեքննողների մեկնաբանությունը՝

Հանդերձանք և անկողնային պարագաների ձեռքբերման համար 169.893.4 հազ. դրամով մատակարարման պայմանագրի կնքումը, եթե միաժամանակ Նույն տեխնիկական բնութագրերով, նույն քանակությամբ առկա է 137.490.7 հազ. դրամ գումարով մատակարարման պայմանագիր, մեր կարծիքով բնականաբար կարելի է գնահատել որպես ավելի բարձր արժեքներով ձեռքբերված՝ քան հնարավոր էր: Իսկ ինչ վերաբերվում է հիմնադրամի կանոնադրությամբ սահմանված հիմնական նպատակների իրականացմանը, նշենք, որ /բացի դատապարտյալների աշխատանքային զբաղվածության ապահովմանը/ չի ներկայացվել նշված պայմանագրի կատարման արդյունքում գոյացած եկամուտներից հիմնադրամի կողմից այդ նպատակով կոնկրետ ինչ աշխատանքներ են կատարվել և ինչ արժեքներով գումարներ է ներդրվել:

ՀՀ ԱՆ ՔԿԾ-ի և հիմնադրամի միջև կնքված հացի մատակարարման պայմանագրի վերաբերյալ

2018 թվականի փետրվարի 22-ին ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության և Հիմնադրամի միջև կնքվել է հաց մատակարարելու վերաբերյալ թիվ ՀՀ ԱՆ ՔԿՎ-ՄԱ-ԱՊՁԲ-18/1 պայմանագիրը: Պայմանագրի ընդհանուր գինը կազմել է 190,720.0 հազ. դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Հացի մեկ կիլոգրամի արժեքը կազմել է 298 դրամ: 2018թ. նոյեմբերի 23-ին համաձայնագրով մատակարարվող հացի քանակը նվազեցվել է, և պայմանագրի ընդհանուր գինը կազմել է 172,840.0 հազ. դրամ: Ընդհանուր գնից 40,000.0 հազ. դրամը փոխանցվել է որպես կանխավճար: Տվյալ պայմանագրի շրջանակում 2018 թվականի ընթացքում Քրեակատարողական ծառայությանն է մատակարարվել 136,456.4 հազ. դրամի հաց, 2019 թվականի առաջին եռամսյակում՝ 27,769.9 հազ. դրամի հաց, իսկ մնացած 8,613.7 հազ. դրամի հացը՝ 2019 թվականի ընթացքում: Պայմանագրի 8.1 կետով սահմանվել է, որ պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Ընդ որում՝ պայմանագրով նախատեսված ամբողջ գումարը ՔԿ ծառայության կողմից փոխանցվել է 2018 թվականին:

2018 թվականին կնքված հացի մատակարարման պայմանագրով ստանձնած պարտավորությունները ամբողջ ծավալով դեռ չկատարած /կատարվել է 2019թ. հունիս-հուլիս ամիսներին/՝ 2019 թվականի փետրվարի 27-ին ՔԿ ծառայության և Հիմնադրամի միջև կնքվել է ևս մեկ հացի մատակարարման թիվ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱՊՁԲ-19/1 պայմանագիրը, որի ընդհանուր գինը կազմել է 59,600.0 հազ. դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, հացի մեկ կիլոգրամի արժեքը 298 դրամ: Պայմանագրի գնից 25,000.0 հազ. դրամը 12.03.2019թ. փոխանցվել է որպես կանխավճար: 31.03.2019 թվականի դրությամբ 59,600.0 հազ. դրամից ՔԿ ծառայությանն է մատակարարվել 1,687.5 հազ. դրամի հաց, իսկ ծառայության կողմից 2019 թվականի առաջին եռամսյակում կանխավճարից բացի այլ գումար չի փոխանցվել:

Հիմնադրամի կողմից հացի արտադրությունը կազմակերպվել է 4 հացի արտադրամասերում՝ Նուբարաշեն, Վանաձոր, Արթիկ և Գորիս մասնաճյուղերում:

- Նուբարաշենի արտադրամասը ապահովում է Նուբարաշեն, Վարդաշեն, Արմավիր, Դատապարտյալների հիվանդանոց, Երևան կենտրոն, Սևան և Հրազդան ՔԿՀ-ների հացի պահանջը:
- Արթիկի հացի արտադրամասը ապահովում է Արթիկ և Կոշ ՔԿՀ-ների հացի պահանջը,
- Վանաձորի արտադրամասը միայն Վանաձոր ՔԿՀ-ի հացի պահանջը,
- Գորիսի մասնաճյուղում Գորիս ՔԿՀ-ի համար՝ հաց արտադրվել է մի քանի, բաց տիպի ռեժիմով պատիժը կրող դատապարտյալների համար:

Հիմնադրամը որոշ ՔԿՀ-ներին մատակարարվող հացը ձեռք է բերել երրորդ անձանցից և վերավաճառել ՔԿԾ-ին: Մասնավորապես

Աբովյան ՔԿՀ-ին հացը մատակարարվել է Աբովյանի հացի գործարանի կողմից 29.11.2017թ. կնքված հացի մատակարարման պայմանագրի հիման վրա՝ 1 կգ-ը 265 դրամ արժեքով: 2018 թվականի ընթացքում մատակարարվել է 4,596.8 հազ. դրամի հաց, հիմնադրամը վճարել է 4,704.8 հազ. դրամ, 01.01 2018թ. դրությամբ հիմնադրամը 93.6 հազ. դրամ պարք է ունեցել Աբովյանի հացի գործարանին, մնացած 14.4 հազ. դրամը 01.01.2019թ. դրությամբ ձևակերպվել է որպես կանխավճար: 2019 թվականի առաջին եռամսյակում մատակարարվել է 812.6 հազ. դրամի հաց, վճարվել է 525.9 հազ. դրամ: Պայմանագրի շրջանակում 06.05.2019թ. դրությամբ մատակարարվել է 5,772.7 հազ. դրամի հաց, որի դիմաց ամբողջությամբ վճարվել է:

Գորիս ՔԿՀ-ի հացի պահանջարկի մեծ մասը մատակարարել է «Շոկո Փարտի» ՍՊԸ-ն՝ 2018թ. հունվարի 29-ին կնքված մատակարարման պայմանագրի հիման վրա՝ 1կգ-ը 265 դրամ արժեքով: 2018 թվականի ընթացքում մատակարարվել է 3,521.7 հազ. դրամի հաց, հիմնադրամը վճարել է 2,913.4 հազ. դրամ, 01.01.2019թ. դրությամբ կրեդիտորական պարտքը ՍՊԸ-ին կազմել է 608.3 հազ. դրամ: 2019 թվականի առաջին եռամսյակում մատակարարվել է 729.7 հազ. դրամի հաց, վճարվել է 928.5 հազ. դրամ, կրեդիտորական պարտքը ՍՊԸ-ին կազմել է 409.5 հազ. դրամ:

2018 թվականի նոյեմբերին Հիմնադրամի և Սոնիկ Մարգարյան Ա/Ձ-ի միջև կնքվել է հացի մատակարարման պայմանագիր, համաձայն որի՝ մատակարարը հացը պետք է արտադրի Հիմնադրամի կողմից տրված 1-ին տեսակի ցորենի ալյուրից և դրա դիմաց 1 կգ հացի համար պատվիրատուն պետք է վճարի 85 դրամ: 2018 թվականի ընթացքում Սոնիկ Մարգարյան Ա/Ձ-ն Սևան և Հրազդան ՔԿՀ-ների համար մատակարարել է 981.7 հազ. դրամի հաց, վճարվել է 418.3 հազ. դրամ, ձևակերպվել է կրեդիտորական պարտք՝ 563.4 հազ. դրամ, 2019թ. Առաջին եռամսյակում մատակարարվել է 996.9 հազ. դրամի հաց, մնացած 1,560.3 հազ. դրամը ձևակերպվել է մարում նյութերով՝ ցորենի ալյուր, ձեթ, խմորիչ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված է, որ «Գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե՝ 1) գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ»: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 23.4 կետով սահմանված են այն գնումները, որոնք կարող են կատարվել օրենքի 23-րդ հոդվածի 1.1 մասի հիման վրա՝ հատուկ

կամ բացառիկ առկայության հիմքով, որի 17-րդ տողով սահմանված է հիմնադրամից մեկ անձից գնման պայմանները՝ «քրեակատարողական ծառայության կարիքների համար «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված հիմնադրամի արտադրած ապրանքների, կատարած աշխատանքների և մատուցած ծառայությունների ձեռքբերում՝ պայմանով, որ գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գները պետք է հավասար կամ ցածր լինեն դրանց շուկայական գներից»։ Արդյունքում ստացվում է, որ նույն տեխնիկական բնութագրերով հացը հնարավոր էր ձեռք բերել ավելի էժան՝ 1 կգ-ը 265 դրամով՝ 298 դրամի փոխարեն:

Առկա է անհամապատասխանություն՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 23.4 կետի 17-րդ տողով սահմանված պահանջների և 2018 թվականի փետրվարի 22-ին ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության և Հիմնադրամի միջև կնքված հաց մատակարարելու վերաբերյալ թիվ ՀՀ ԱՆ ՔԿՎ-ՄԱ-ԱՊՁԲ-18/1 պայմանագրի հետ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը՝

Պարզաբանում ենք, որ բերված չէ, որևէ ուսումնասիրություն, վերլուծություն, փաստական տվյալ կամ պաշտոնական աղբյուր, որով ներկայացվում է շուկայում 1-ին տեսակի ցորենի ալյուրի հացի գինը՝ առավել ևս այն, որ հիմնադրամի կողմից մատակարարված հացի գինը՝ 298 դրամ, բարձր է «շուկայում ձևավորված նույն տեսակի հացի արժեքից»: Հնարավոր է, որ նման եզրահանգման համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ հիմնադրամի կողմից «Գորիս» ՔԿՀ-ին մատակարարված հացի 1կգ-ի ձեռք բերման գինը 265 դրամ է, սակայն հաշվի չի առնվել, որ տվյալ գինը չի ներառում ԱԱՀ-ն, որն ամբողջությամբ վճարել է հիմնադրամը և այս պարագայում հիմնադրամի կողմից պետությանն է վճարվել ԱԱՀ-ն իր ամբողջ ծավալով, որը հակառակ դեպքում չէր իրականացվի:

Նշենք, որ 2019-2020թթ ընթացքում ամբողջությամբ դադարեցվել են հիմնադրամի և ՔԿԾ միջև կնքված հացի մատակարարման բոլոր պայմանագրերը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը՝

Նշենք, Աբովյանի հացի գործարանի հետ 29.11.2017թ. կնքված հացի մատակարարման պայմանագրի գինը սահմանվել է 1 կգ-ը 265 դրամ /ներառյալ ԱԱՀ-ն/: Հետևաբար առկա է դեպք, երբ հացը կարելի էր ձեռք բերել ավելի էժան գնով:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով սահմանված է, որ «Դատապարտյալների զբաղվածությունն ապահովելու, դատապարտյալներին և կալանավորվածներին պահելու պայմանները բարելավելու, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների սոցիալական, մշակութային ոլորտները զարգացնելու նպատակով քրեակատարողական ծառայության համակարգում Հայաստանի Հանրապետության կառավարությունն ստեղծում է հիմնադրամ, որը գործում է հիմնադրամի կանոնադրության համաձայն»:

Մինչույն ժամանակ՝ Հիմնադրամի կանոնադրության 2.2 կետով սահմանված հիմնադրամի գործունեության նպատակներից է «Դատապարտյալների աշխատանքային զբաղվածության ապահովումը»: Ընդ որում՝ 2018 թվականի փետրվարի 22-ին ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության և Հիմնադրամի միջև կնքված հաց մատակարարելու վերաբերյալ թիվ ՀՀ ԱՆ ՔԿՎ-ՄԱ-ԱՊՁԲ-18/1 պայմանագրով սահմանված 172.840.0 հազ. դրամ արժեքով հացի մատակարարման գործընթացում ներգրավված է եղել ընդամենը 3 դատապարտյալ:

Առկա է անհամապատասխանություն՝ 2018 թվականի փետրվարի 22-ին ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության և Հիմնադրամի միջև կնքված հաց մատակարարելու վերաբերյալ թիվ ՀՀ ԱՆ ՔԿՎ-ՄԱ-ԱՊՁԲ-18/1 պայմանագրով կատարված գործարքի և «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով սահմանված նպատակների հետ:

Հիմնադրամի կողմից տնօրինվող գույքի օգտագործման վերաբերյալ

«Հիմնադրամների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ հիմնադրամի կանոնադրությունը սահմանում է հիմնադրամի գույքի տնօրինման և կառավարման կարգը: Սակայն հիմնադրամի կանոնադրությամբ նշված կարգ սահմանված չէ, փոխարենը՝ հիմնադրամի կանոնադրության 4.7-րդ կետի 4-րդ ենթակետով միայն գույքի տնօրինման կարգի հաստատման իրավասությունը վերապահվել է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին, սակայն խորհրդի կողմից նույնպես նման կարգ չի սահմանվել:

Առկա է անհամապատասխանություն՝ «Հիմնադրամների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2.6 մասով սահմանված պահանջի մասով:

[ՀՀ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ](#)

Միևնույն ժամանակ առկա է անհամապատասխանություն նաև հիմնադրամի կանոնադրության 4.7-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջի մասով:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը՝

2020թ. մայիսի 5-ին «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից գումարված նիստի արդյունքում սահմանվել է հիմնադրամի գույքի տնօրինման կարգ:

Հաշվեքննողների մեկնաբանությունը՝

Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացվել է պարզաբանում հաշվետու ժամանակաշրջանից հետո արձանագրված փաստի վերացման վերաբերյալ:

ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 25-ի ««Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամին անհատույց օգտագործման գույք հանձնելու և օտարելու մասին» թիվ 389-Ա որոշմամբ անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հիմնադրամին է հանձնվել ՀՀ արդարադատության նախարարության «Մեղրի» քրեակատարողական հիմնարկի կողմից օգտագործվող 148 հա ընդհանուր մակերեսով հողատարածքը, ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի կողմից օգտագործվող 13 հա ընդհանուր մակերեսով հողատարածքը և 1 հա խնձորի այգին, ինչպես նաև՝ ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի, «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկի և ՀՀ արդարադատության նախարարության գույքի մի մասը:

- 2015 թվականի հոկտեմբերի 21-ին հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 05-2015 արձանագրությամբ որոշում է ընդունվել՝ հաստատել «Հիմնադրամին ամրացված՝ ՀՀ Սյունիքի մարզի Նոնաձոր համայնքի վարչական տարածքում և հարակից տարածքներում գտնվող հողամասում նույն ծառերի տնկման, մշակման և բերքի վաճառքի ու վերամշակմամբ բնական հյութերի արտադրության գործունեության» ծրագիրը: Ծրագրով նախատեսվել է ներգրավել ներդրողի, որը հողամասում պետք է իրականացնի շուրջ 300-400 մլն դրամի ներդրում /նույն ծառերի տնկում, ոռոգման համակարգի կառուցում, հողային աշխատանքներ և այլն/: Համաձայն ծրագրի՝ հիմնադրամն իր ներդրած

148 հա հողատարածքի դիմաց պետք է ստանար շահույթի 25 տոկոսը, որը պետք է ուղղվեր հիմնադրամի կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացմանը: Միաժամանակ ծրագրի իրականացման արդյունքում առնվազն 20 դատապարտյալ պետք է ապահովվեին աշխատանքով: Նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի և «Նոնենի» ՍՊԸ-ի միջև 11.05.2016թ. կնքվել է համատեղ գործունեության պայմանագիր, որը սահմանված ժամկետում պետական գրանցում չի ստացել և փաստացի չի գործել: Այնուհետև 28.02.2017թ. հիմնադրամի և «Նոնենի» ՍՊԸ-ի միջև կնքվում է նոր՝ համատեղ գործունեության պայմանագիր: Համաձայն նշված պայմանագրի՝ հիմնադրամը որպես ավանդ ներդնում է 148 հա հողատարածքից 81,803 հա հողամասի օգտագործման իրավունքը, իսկ «Նոնենի» ՍՊԸ-ն որպես ավանդ ներդնում է 100,000 հատ նռան տնկիներ և այդ տնկիների տնկման համար հողային, հարթեցման, ոռոգման համակարգի կառուցման և այլ աշխատանքներ: Պայմանագրի 1.2.1 կետի գ. ենթակետով սահմանվել է, որ ներդրողի ավանդի նկարագիրը ներկայացված է սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ում, որը ստուգման ժամանակաշրջանում հիմնադրամում առկա չէր: Հիմնադրամի ներդրումը կազմում է 90,000.0 հազ. դրամ, իսկ «Նոնենի» ՍՊԸ-ի ներդրումը հինգ տարվա կտրվածքով պետք է կազմեր 360,000.0 հազ. դրամ: Մինչույն ժամանակ հիմնադրամի տնօրենի տեղեկատվության հիման վրա մնացած 66.2 հա հողատարածքը հաշվետու ժամանակաշրջանում նույնպես փաստացի տնօրինվել է նշված ՍՊԸ-ի կողմից՝ առանց որևէ փաստաթղթի: Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ համատեղ գործունեությունն իրականացվում է շահույթ ստանալու, հիմնադրամի մասով նաև կանոնադրական նպատակներին ուղղված դատապարտյալների աշխատանքային զբաղվածության ապահովման, քրեակատարողական ծառայության ուղղիչ հիմնարկների տնտեսական և կենցաղային պայմանների բարելավմանը: Պայմանագրի 1.2.2 կետի համաձայն՝ Հիմնադրամը որպես ավանդ անհրաժեշտության դեպքում այգու մշակման աշխատանքներում իրականացնում է առնվազն 20 դատապարտյալի աշխատանքային ներդրումը, որոնց պահպանման ռեժիմը թույլատրում է վճարովի աշխատանքներում նրանց ներգրավումը: Պայմանագրի 4.2 կետի համաձայն՝ համատեղ գործունեության արդյունքում ստացված շահույթը բաշխվում է կողմերի միջև ըստ համատեղ գործում իրենց փաստացի բաժինների՝ ներդրողին՝ 75%, հիմնադրամին՝ 25%: Պայմանագրի 7.1 կետի համաձայն՝ այն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 25 տարի ժամկետով: Հարկ է նշել, որ հոգաբարձուների խորհրդի ընդունված ծրագրով նշվում էր, որ առնվազն 20 դատապարտյալներ կապահովվեն մշտական աշխատանքով, սակայն կնքված պայմանագրի 1.2.2 կետի բ. ենթակետով սահմանված է, որ հիմնադրամը որպես

ավանդ ներդնում է «անհրաժեշտության դեպքում» այգու մշակման աշխատանքներում առնվազն 20 դատապարտյալի աշխատանքային ներդրումը: Ըստ էության, պայմանագրում նշված ձևակերպման շեղումը ծրագրում նշված արտահայտությունից հանգեցրել է նրան, որ դատապարտյալներին մշտական աշխատանքով ապահովելը չի ընդունվել որպես պայմանագրային պարտավորություն:

Առկա է անհամապատասխանություն՝ 2015 թվականի հոկտեմբերի 21-ին հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 05-2015 արձանագրությամբ ընդունված «Հիմնադրամին ամրացված՝ ՀՀ Սյունիքի մարզի Նոնաձոր համայնքի վարչական տարածքում և հարակից տարածքներում գտնվող հողամասում նռան ծառերի տնկման, մշակման և բերքի վաճառքի ու վերամշակմամբ բնական հյուսիսի արտադրության գործունեության» ծրագրով նախատեսված «առնվազն 20 դատապարտյալների մշտական աշխատանքով ապահովելու» դրույթի և 28.02.2017թ. հիմնադրամի և «Նոնենի» ՍՊԸ-ի միջև կնքված համատեղ գործունեության պայմանագրի 1.2.2 կետի բ. ենթակետով սահմանված՝ «հիմնադրամը որպես ավանդ ներդնում է անհրաժեշտության դեպքում այգու մշակման աշխատանքներում առնվազն 20 դատապարտյալի աշխատանքային ներդրումը» դրույթի միջև:

Միևնույն ժամանակ պայմանագրի 2-րդ կետի /ընդհանուր գործեր վարելը/ 2.1 ենթակետով սահմանված է, որ «Սույն պայմանագրով իրականացվող գործունեության ընդհանուր գործերը վարում է ներդրողը՝ հիմնադրամին ոչ ուշ, քան ֆինանսական հաշվետվության համար օրենքով սահմանված ժամկետներում ներկայացնելով տարեկան հաշվետվություն: Հաշվետվության ձևերը կողմերը հաստատում են համատեղ», 2.4 կետի համաձայն՝ «Կողմերից յուրաքանչյուրը, անկախ այն բանից, լիազորված է վարել սույն պայմանագրով ընդհանուր գործերը, թե ոչ, իրավունք ունի ծանոթանալ համատեղ գործունեությանը վերաբերող բոլոր փաստաթղթերին և ստանալ այդ գործունեության մասին ցանկացած այլ տեղեկատվություն և փաստաթուղթ կամ դրա պատճենը»: Հիմնադրամում որևէ փաստաթուղթ առկա չէր, թե հիմնադրամը արդյոք հաշվետու ժամանակաշրջանում օգտվել է պայմանագրի 2.4 կետով սահմանված իրավասություններից՝ ծանոթացել է համատեղ գործունեությանը վերաբերող փաստաթղթերին, պայմանագրի 2.1 կետի համաձայն կողմերը համատեղ հաստատել են հաշվետվության ձևերը, թե՛ ոչ:

Առկա է անհամապատասխանություն՝ 28.02.2017թ. հիմնադրամի և «Նոնենի» ՍՊԸ-ի միջև կնքված համատեղ գործունեության պայմանագրի 2.1 և 2.4 կետերով սահմանված պահանջների հետ:

Հիմնադրամում առկա էր «Նոնենի» ՍՊԸ-ի կողմից 24.01.2019թ. թիվ 2 գրությամբ հիմնադրամ ներկայացված՝ 2018 թվականի համատեղ գործունեության արդյունքում ստացված շահույթի բաշխման փոխադարձ ակտը և ամփոփ հաշվետվություն՝ 2016-2018թթ. կատարված աշխատանքների վերաբերյալ: Համաձայն նշված տեղեկատվության՝ համատեղ գործունեության արդյունքում շահույթ չի առաջացել՝ արտադրանքի իրացումից ստացված հասույթը կազմել է 5,496.99 հազ. դրամ, արտադրանքի իրացման հետ կապված ծախսերը՝ 7,945.15 հազ. դրամ: Նշված փոխադարձ ակտը ստորագրված է եղել միայն ՍՊԸ-ի տնօրենի կողմից: 2016-2018թթ. ամփոփ հաշվետվությունում կատարված աշխատանքները 2018 թվականին կազմել են 32,124.6 հազ. դրամ, ընդ որում՝ 2016 թվականին կազմել են 41,309.2 հազ. դրամ, 2017թ.՝ 43,325.4 հազ. դրամ: Նշված հաշվետվությունում որպես աշխատուժի ծախս 2016 թվականին ներկայացվել է 22,759.2 հազ. դրամ /ընդհանուր ծախսը կազմել է 41,309. 2 հազ. դրամ/, որից վարձու աշխատողներ՝ 20 մարդ՝ 60 օր, միջինը՝ 5.0 հազ. դրամ օրական, հիմնական աշխատող՝ 12 մարդ՝ 6 ամիս, ամսական միջինը՝ 120.0 հազ. դրամ վարձատրություն, «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի աշխատողներ՝ 2 մարդ՝ 8 ամիս, ամսական միջինը՝ 93.6 հազ. դրամ վարձատրություն, սնունդ-օրապահիկ՝ 120 օր, օրական միջինը՝ 50.0 հազ. դրամ ծախս:

2017 թվականին որպես աշխատուժի ծախս ներկայացվել է 21,729.6 հազ. դրամ /ընդհանուր ծախսը կազմել է 43,325.4 հազ. դրամ/, որից վարձու աշխատողներ՝ 20 մարդ՝ 60 օր, միջինը՝ 5.0 հազ. դրամ օրական, հիմնական աշխատող՝ 12 մարդ՝ 6 ամիս, ամսական միջինը՝ 120.0 հազ. դրամ վարձատրություն, «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի աշխատողներ՝ 2 մարդ՝ 7 ամիս, ամսական միջինը՝ 78.0 հազ. դրամ վարձատրություն, սնունդ-օրապահիկ՝ 120 օր, օրական միջինը՝ 50.0 հազ. դրամ ծախս:

2018 թվականին որպես աշխատուժի ծախս ներկայացվել է 12,750.0 հազ. դրամ /ընդհանուր ծախսը կազմել է /32,124.6 հազ. դրամ/, որից վարձու աշխատողներ՝ 20 մարդ՝ 30 օր, միջինը՝ 5.0 հազ. դրամ օրական, հիմնական աշխատող՝ 12 մարդ՝ 5 ամիս, ամսական միջինը՝ 120.0 հազ. դրամ վարձատրություն, «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի աշխատողներ՝ որևէ ցուցանիշ չի ներկայացվել, սնունդ-օրապահիկ՝ 60 օր, օրական միջինը՝ 50.0 հազ. դրամ ծախս: Նշված հաշվետվության համաձայն՝ 2018 թվականին որևէ դատապարտյալ պայմանագրով նախատեսված աշխատանքներին չի մասնակցել: Արդյունքում՝ հիմնադրամի կանոնադրական

կարևորագույն խնդիրներից մեկը, այն է՝ դատապարտյալներին զբաղվածության ապահովումը, նշված պայմանագրով չի ապահովվել:

Առկա է անհամապատասխանություն՝ 28.02.2017թ. հիմնադրամի և «Նոնենի» ՍՊԸ-ի միջև կնքված համատեղ գործունեության պայմանագրով փաստացի գործունեության արդյունքների և հիմնադրամի կանոնադրության 2-րդ բաժնի («Հիմնադրամի գործունեության առարկան և նպատակները») 7-րդ կետով սահմանված հիմնադրամի որպես գործունեության հիմնական նպատակներից՝ դատապարտյալների աշխատանքային զբաղվածություն ապահովելու, պահանջների հետ:

«Նոնենի» ՍՊԸ-ի կողմից 24.01.2019թ. թիվ 2 գրությամբ հիմնադրամին ներկայացված՝ 2016-2018թթ. կատարված աշխատանքների վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ ՍՊԸ-ի կողմից պայմանագրային պարտավորությունները՝ ներդրումների գումարի չափի և ժամկետների մասով չեն կատարվել: Միևնույն ժամանակ հիմնադրամի տնօրենը 25.02.2019թ. թիվ Ե-26 գրությամբ տեղեկացնում է ՍՊԸ-ի տնօրենին, որ հաշվետվությամբ ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ ներդրումների մասով պայմանագրային պարտավորությունները չեն կատարվել: Ավելին՝ գրությամբ նշվել է, որ հիմնադրամի կողմից 2018 թվականի հոկտեմբերին կատարված գույքագրման արդյունքները ցույց են տվել, որ հաշվետվությամբ ներկայացված ցուցանիշները իրականությանը չեն համապատասխանում և առաջարկվել է լուծել պայմանագիրը: Արդյունքում՝ 2019 թվականի օգոստոսի 1-ին հիմնադրամը հայցադիմում է ներկայացրել դատարան հիմնադրամի և «Նոնենի» ՍՊԸ-ի միջև 28.02.2017թ. կնքված համատեղ գործունեության պայմանագիրը լուծելու պահանջով, որը դատարանի 02.10.2020թ. վճռով բավարարել է:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը՝

Դատավճիռը չի բողոքարկվել և ուժի մեջ է մտել մեկ ամիս անց, ինչի արդյունքում՝ նշված պայմանագիրը և դրանից բխող իրավունքներն այլևս անվավեր են, ուստի և տվյալ հարցը համարում ենք փակված:

Հաշվեքննողների մեկնաբանությունները՝

Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացվել է պարզաբանում ուսումնասիրված հարցի հետագա ընթացքի վերաբերյալ:

Հիմնադրամի կանոնադրության 5.2 կետի («Հիմնադրամի գույքը») համաձայն «Հիմնադրամի կողմից հիմնադրամին հանձնված գույքը

հիմնադրամի սեփականությունն է: Հիմնադրամն այդ գույքը օգտագործում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակով»: Հիմնադրամի և «Նոնենի» ՍՊԸ-ի միջև 28.02.2017թ կնքված համատեղ գործունեության պայմանագրով փաստացի գործունեության արդյունքները հիմնադրամի կանոնադրության 2-րդ կետի («Հիմնադրամի գործունեության առարկան և նպատակները») 2.2-րդ ենթակետով սահմանված որևէ նպատակի չի ծառայել, առավել ևս, որ պայմանագրի առարկա չհանդիսացած 66.2 հա հողատարածքը նույնպես **տնօրինվել է ՍՊԸ-ի կողմից:**

Առկա է անհամապատասխանություն՝ կանոնադրության 2-րդ կետի («Հիմնադրամի գործունեության առարկան և նպատակները») 2.2-րդ ենթակետով և 5-րդ կետի («Հիմնադրամի գույքը») 5.2 կետով սահմանված պահանջների և 28.02.2017թ. հիմնադրամի և «Նոնենի» ՍՊԸ-ի միջև կնքված համատեղ գործունեության պայմանագրով փաստացի գործունեության արդյունքների հետ:

- 16.11.2013թ. հիմնադրամի և «Առագաս» ՍՊԸ-ի միջև կնքվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր, համաձայն որի՝ մինչև 2029 թվականը հիմնադրամի կողմից ՍՊԸ-ին վարձակալության է հանձնվել օգտագործման իրավունքով իրեն պատկանող ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի «Աբովյան» ՔԿՀ-ի հարևանությամբ գտնվող անշարժ գույքից՝ 13հա հողամասից 3097քմ մակերեսով հողամաս և 1025.15քմ մակերեսով շինություններ: Վարձավճարը յուրաքանչյուր ամսվա համար սահմանվել է պայմանագրի կնքման պահից մինչև 2014 թվականի մարտի 31-ը՝ 70.0 հազ. դրամ, 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2015 թվականի մարտի 31-ը՝ 120.0 հազ. դրամ, 2015 թվականի ապրիլի 1-ից մինչև 2018 թվականի մարտի 31-ը՝ 150.0 հազ. դրամ, 2018 թվականի ապրիլի 1-ից՝ 200.0 հազ. դրամ: Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ վարձակալված գույքն օգտագործվել է որպես քարի վերամշակման արտադրամաս: Ընդ որում՝ պայմանագրով սահմանվել է, որ վարձավճարների ամբողջությամբ կամ մասնակի վճարելու դեպքերում ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարվում է տուգանք՝ չվճարված գումարի 0.4 տոկոսի չափով: Ուսումնասիրությամբ պարզվեց, որ հաշվետու ժամանակաշրջանում հիմնադրամին վարձավճարներ ընդհանրապես չեն վճարվել, որը կազմել է 3,050.0 հազ. դրամ և տույժ, տուգանք՝ 3,158.8 հազ. դրամ, ընդամենը՝ 6,208.8 հազ. դրամ: Պայմանագրի գործողության սկզբից մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը /16.11.2013թ.-31.03.2019թ./ վարձավճարի մայր գումարը կազմել է 5,450.0 հազ. դրամ, տույժ-տուգանք՝ 12,119.2 հազ. դրամ, ընդամենը՝ 17,569.2 հազ. դրամ: Հիմնադրամի տեղեկանքի համաձայն՝

հիմնադրամը բազմիցս գրավոր և բանավոր դիմել է ՍՊԸ-ին՝ վարձավճարի պարտքը մարելու վերաբերյալ, սակայն ըստ էության դրանք մնացել են անպատասխան: Նշենք, որ որևէ գրություն դրա վերաբերյալ չի ներկայացվել: Հարկ է նշել, որ նշված գործարքը միտված չի եղել հիմնադրամի կանոնադրության 2.2-րդ կետով սահմանված հիմնական նպատակների իրականացմանը՝ դատապարտյալների աշխատանքային զբաղվածությամբ ապահովելը, քրեակատարողական ծառայության սոցիալական ոլորտի զարգացմանը և այլն: Առավել ևս հիմնադրամի գույքի օգտագործմամբ որևէ եկամուտ չի ստացվել:

Առկա է անհամապատասխանություն՝ հիմնադրամի կանոնադրության 2.2-րդ կետով սահմանված հիմնական նպատակների և 3097քմ մակերեսով հողամասի և 1025.15քմ մակերեսով շինությունների վարձակալության տրամադրման գործարքի հետ:

Միևնույն ժամանակ, հիմնադրամի կանոնադրության 5.6 կետի համաձայն՝ «Հիմնադրամն իրականացնում է իր ունեցվածքի տնօրինումը, օգտագործումը և տիրապետումը միայն այդ գույքի նշանակությանը համապատասխան և միայն հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրականացման համար»:

Առկա է անհամապատասխանություն՝ հիմնադրամի կանոնադրության 5.6 կետով սահմանված պահանջների և 3097քմ մակերեսով հողամասի և 1025.15քմ մակերեսով շինությունների վարձակալության տրամադրման գործարքի հետ:

Հարկ է նշել, որ հիմնադրամի տեղեկատվության համաձայն՝ «Առագաս» ՍՊԸ-ի հիմնադրամին ունեցած պարտքը 31.07.2019թ. դրությամբ ՀՀ սնանկության դատարանում թիվ ԵԱՔԴ/0026/04/14 գործով ճանաչվել է որպես նշված սնանկացման գործով ստորադաս չապահովված պահանջ, համապատասխանաբար՝ հիմնադրամը հերթագրվել է պարտատերերի պահանջների հերթում:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը՝

03.03.2020թ. ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից կազմված թիվ ԱԿ/1337-20 գրության համաձայն 16.11.2013թ. «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի և «Առագաս» ՍՊԸ-ի (նախկին «Ա.Է.Կ.Ա.Գ» ՍՊԸ-ի) միջև կնքված «Արովյան» ՔԿՀ հարևանությամբ գտնվող հասցեի անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը կոմիտե չի ներկայացվել, հետևաբար նշված պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցում չի կատարվել:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև ԵԱԲԴ/0026/04/14 սնանկության գործով կայացված վճիռը, ըստ որի 2014թ-ին նշված ՍՊԸ-ի գործունեությունը կասեցվել է և սկսվել է լուծարային վարույթ, հիմնադրամի կողմից 23.03.2020թ. գրություն է ներկայացվել ՀՀ Ոստիկանության Կոտայքի բաժին վերացնելու համար առանց օրինական հիմքերի անշարժ գույքի տարածք ՍՊԸ-ի ներխուժումը: Ոստիկանությունը հարցին լուծում չի տվել:

Ի պատրասխան՝ <<Առագաս>> ՍՊԸ -ն 09.06.2020 թվականին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու, դրա անհնարինության դեպքում ամբողջ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու պահանջի մասին:

Հիմնադրամի կողմից պատրաստվում է հակընդդեմ հայց:

Հաշվեքննողների մեկնաբանությունները՝

Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացվել է պարզաբանում ուսումնասիրված հարցի հետագա ընթացքի վերաբերյալ:

Գույքագրման վերաբերյալ

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով կազմակերպությունն անցկացնում է ակտիվների և պարտավորությունների գույքագրում: Նույն հոդվածի 2-րդ մասի ա/ կետի համաձայն՝ գույքագրման անցկացումը պարտադիր է տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ, բ/ կետի համաձայն՝ կազմակերպության վերակազմակերպման և լուծարման դեպքերում, գ/ կետի համաձայն՝ տարերային աղետների, հրդեհների և այլ պատճառների հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակների դեպքերում, դ/ կետի համաձայն՝ գույքի հափշտակման, փչացման և կորստի փաստերի բացահայտման դեպքերում, ե/ կետի համաձայն՝ նյութական պատասխանատու անձի փոփոխման դեպքերում: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000 թվականի հունիսի 2-ի թիվ 102 հրամանով սահմանված է կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը, որի 1.5 կետի ա/ ենթակետի համաձայն գույքագրման անցկացումը պարտադիր է տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ՝ հաշվետու տարվա նոյեմբերի 1-ից ոչ շուտ, ե/ ենթակետի

համաձայն նյութական անձի փոփոխման դեպքում՝ գույքի ընդունման-հանձնման օրը: Նշված հրամանի 1.6 կետի ա/ ենթակետի համաձայն՝ պարտադիր գույքագրման ժամանակ գույքագրման ենթակա են տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ՝ կազմակերպության բոլոր ակտիվներն ու պարտավորությունները, ե/ ենթակետի համաձայն՝ նյութական պատասխանատու անձանց փոփոխման դեպքում՝ ընդունվող-հանձնվող գույքը:

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ 2018 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ չի իրականացվել գույքագրում, որի արդյունքում չի պահպանվել «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-ին մասի ա/ կետով սահմանված պահանջը՝ գույքագրման անցկացումը պարտադիր է տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000 թվականի հունիսի 2-ի թիվ 102 հրամանի 1.5 կետի ա/ ենթակետով սահմանված պահանջը՝ գույքագրման անցկացումը պարտադիր է տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ՝ հաշվետու տարվա նոյեմբերի 1-ից ոչ շուտ, 1.6 կետի ա/ ենթակետով սահմանված պահանջը՝ պարտադիր գույքագրման ժամանակ գույքագրման ենթակա են տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ՝ կազմակերպության բոլոր ակտիվներն ու պարտավորությունները:

Առկա է անհամապատասխանություն՝ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-ին մասի ա/ կետով, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000 թվականի հունիսի 2-ի թիվ 102 հրամանի 1.5 կետի ա/ ենթակետով և 1.6 կետի ա/ ենթակետով սահմանված պահանջների հետ:

Միևնույն ժամանակ չեն իրականացվել գույքագրման աշխատանքներ և տվյալ գործառույթից բխող ակտիվների և պարտավորությունների ընդունման-հանձնման աշխատանքներ հիմնադրամի տնօրենի պաշտոնը զբաղեցնող անձանց փոփոխման դեպքերում: Արդյունքում չի պահպանվել «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-ին մասի ե/ կետով սահմանված պահանջը՝ գույքագրման անցկացումը պարտադիր է նյութական պատասխանատու անձի փոփոխման դեպքերում, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000 թվականի հունիսի 2-ի թիվ 102 հրամանի 1.5 կետի ե/ ենթակետով սահմանված պահանջը՝ նյութական անձի փոփոխման դեպքում՝ գույքի ընդունման-հանձնման օրը, 1.6 կետի ե/ ենթակետով սահմանված պահանջը՝ պարտադիր գույքագրման ժամանակ գույքագրման ենթակա են նյութական պատասխանատու անձանց փոփոխման դեպքում՝ ընդունվող-հանձնվող գույքը:

Առկա է անհամապատասխանություն՝ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-ին մասի ե/ կետով, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000 թվականի հունիսի 2-ի թիվ 102 հրամանի 1.5 կետի ե/ ենթակետով և 1.6 կետի ե/ ենթակետով սահմանված պահանջների հետ:

Հիմնադրամի հիմնական նպատակների իրականացման վերաբերյալ

Հիմնադրամի կանոնադրության 2.2 կետի («Հիմնադրամի գործունեության առարկան և նպատակները») համաձայն՝

Հիմնադրամի հիմնական նպատակներն են՝

- **Դատապարտյալների աշխատանքային զբաղվածության ապահովումը**
- **Քրեակատարողական ծառայության սոցիալական ոլորտի զարգացումը**
- **Քրեակատարողական ծառայության ուղղիչ հիմնարկների տնտեսական և կենցաղային պայմանների զարգացումը**
- **Քրեակատարողական ծառայության աշխատողների մասնագիտական մակարդակի բարձրացումը**
- **Դատապարտյալների կրթական մակարդակի բարձրացումը**

Հիմնադրամի տնօրենի 04.02.2021 թվականի թիվ Ե-05 գրությամբ ներկայացվել է հիմնադրամում էլեկտրոնային տարբերակով առկա 2018 թվականի գործունեության հաշվետվությունից այն մասը, որը վերաբերել է հիմնադրամի նպատակների իրականացմանը: Նշենք, որ այդ հաշվետվության էլեկտրոնային տարբերակը հիմնադրամի որևէ պաշտոնատար անձի կողմից ստորագրված չի եղել: Նշված տեղեկատվությամբ ներկայացված տվյալների ուսումնասիրությամբ պարզվեց, որ այն շատ ընդհանրական է, հիմնականում պարունակում է միայն քանակական ցուցանիշներ և հիմնադրամում առկա փաստաթղթերով չեն հիմնավորվում: Մասնավորապես նշված հաշվետվությամբ ներկայացվել է 2018 թվականի ընթացքում աշխատանքային զբաղվածությամբ ապահովված թվով 108 դատապարտյալ, մինչդեռ հիմնադրամում առկա տվյալների հիման վրա 2018 թվականի տարբեր ժամանակաշրջաններում աշխատանքով ապահովվել են ընդամենը 51 դատապարտյալ: Միևնույն ժամանակ հիմնադրամի գործունեության մյուս նպատակների՝ քրեակատարողական ծառայության սոցիալական ոլորտի զարգացման, քրեակատարողական հիմնարկների տնտեսական և կենցաղային պայմանների զարգացման, քրեակատարողական ծառայության աշխատողների մասնագիտական ու դատապարտյալների կրթական մակարդակի բարձրացման վերաբերյալ աշխատանքները հստակ չեն ներկայացվել: Մասնավորապես՝ «ՔԿԾ

նյութատեխնիկական ապահովումը» վերնագրով բաժնում ներկայացվել է քրեակատարողական հիմնարկներին հացի մատարակարման և հանդերձանքի և անկողնային պարագաների մատակարարման մասով պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման արդյունքները: Տվյալ պարագայում անհասկանալի է, թե նշված աշխատանքները հիմնադրամի կանոնադրական որ նպատակին է ծառայել: Հաշվետվությամբ ներկայացվել է, որ համաձայն նշված կապալի պայմանագրի շրջանակներում «Մասիս գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն «Աբովյան» ՔԿՀ-ում իրականացրել է դատապարտյալների ուսուցում, միևնույն ժամանակ ՍՊԸ-ից բերվել են հավելյալ մեքենաներ՝ ՔԿՀ-ում կարի արտադրություն կազմակերպելու համար: Այդ մասով անհրաժեշտ է նշել, որ դատապարտյալների ուսուցման վերաբերյալ, ինչպես նաև կարի մեքենաներ ՔԿՀ-ին տրամադրելու վերաբերյալ նշված կապալի պայմանագրով որևէ դրույթ սահմանված չէ, առավել ևս փաստացի ուսուցում և կարի մեքենաներ տրամադրելու վերաբերյալ հիմնադրամում որևէ փաստաթուղթ առկա չէ: «ՔԿՀ կենցաղ-տնտեսական պայմանների զարգացման ուղղությամբ» վերնագրով բաժնում՝ որպես կատարված աշխատանքներ, հիմնադրամի կողմից հաշվետվությունում շատ ընդհանրական ձևով ներկայացվել է մի շարք քրեակատարողական հիմնարկներում կատարված շինարարական և վերանորոգման աշխատանքներ, մասնավորապես արտաքին պատի կառուցում, խմելու ջրագծի վերականգնում և վերանորոգում, կոյուղագծերի վերանորոգում և օդափոխության համակարգի տեղադրում՝ առանց հստակ ներկայացնելու՝ որ քրեակատարողական հիմնարկում ինչ աշխատանքներ են իրականացվել, ինչ ծավալներով, ինչ միջոցներով է իրականացվել /սեփական միջոցների հաշվին, թե ՔԿԾ-ի միջոցներով՝ պայմանագրային հիմունքներով/, դատապարտյալների կոնկրետ ներգրավվածությունը, պայմանագրերը և այլ հարցեր: Տվյալ պարագայում նույնպես հստակ նշված չէ, թե նշված աշխատանքները հիմնադրամի կանոնադրական որ նպատակին է ծառայել: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հիմնադրամի 2018 թվականի հաշվետվություն հաստատված չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը հիմք է տալիս արձանագրելու, որ հիմնադրամի կանոնադրության 2.2 կետով սահմանված հիմնադրամի գործունեության հիմնական նպատակները՝ քրեակատարողական ծառայության սոցիալական ոլորտի զարգացումը, քրեակատարողական հիմնարկների տնտեսական և կենցաղային պայմանների զարգացումը, քրեակատարողական ծառայության աշխատողների մասնագիտական ու դատապարտյալների կրթական մակարդակի բարձրացումը, փաստացի հիմնադրամի կողմից չեն իրականացվել, իսկ ինչ վերաբերվում է դատապարտյալների աշխատանքային զբաղվածության ապահովմանը, ապա այն 2018 թվականին կազմել է ընդամենը 51 դատապարտյալ:

Հիմնադրամի կողմից ներկայացված տեղեկատվության ուսումնասիրությամբ պարզվեց, որ 2018 թվականի ընթացքում հիմնադրամը աշխատանքային զբաղվածությամբ ապահովել է թվով 51 դատապարտյալի, որից ստեղծագործական աշխատանքներ /ձեռքի աշխատանքներ/ իրականացրել են թվով 21 դատապարտյալներ, այլ աշխատանքներ՝ 30 դատապարտյալ: Թվով 25 դատապարտյալ աշխատել է «Աբովյան» ՔԿՀ-ից, որից 24-ը աշխատել է կարի արտադրամասում /23 կարող բանվոր, 1 հավաքարար/, 1 կրակայրիչ հավաքող, այնուհետև 1 աշխատակից կարի արտադրամասից հետո աշխատել է խոզաբուծական տնտեսությունում: Թվով 1-ական դատապարտյալ «Վարդաշեն» ՔԿՀ-ից և «Արմավիր» ՔԿՀ-ից 1 ամիս աշխատել են շինարարությունում: Թվով 3 դատապարտյալ աշխատել է հացի արտադրությունում՝ 1-ը՝ «Գորիս» ՔԿՀ-ից՝ 2 ամիս, 1-ը՝ «Նուբարաշեն» ՔԿՀ-ից՝ 7 ամիս, 1-ը՝ «Արթիկ» ՔԿՀ-ից՝ 8 ամիս: Նշենք, որ կարի արտադրամասի 23 աշխատողները 2018 թվականի ընթացքում աշխատել են 1-ի 9 ամիսների ընթացքում, ընդ որում 1-3 ամիս աշխատել է 7 աշխատող, 4-6 ամիս՝ 14, 1՝ 7 ամիս, 1՝ 9 ամիս:

2019 թվականի առաջին եռամսյակի ընթացքում հիմնադրամը աշխատանքային զբաղվածությամբ ապահովել է թվով 18 դատապարտյալի, որից ստեղծագործական աշխատանքներ /ձեռքի աշխատանքներ/ իրականացրել են թվով 11 դատապարտյալներ, այլ աշխատանքներ՝ 7 դատապարտյալ: Թվով 6 դատապարտյալ աշխատել է «Աբովյան» ՔԿՀ-ից, որից 3-ը աշխատել է կարի արտադրամասում, 1-ը՝ խոզաբուծական տնտեսությունում, 2-ը՝ կրակայրիչ հավաքող, 1-ը՝ «Մեղրի» ՔԿՀ-ից՝ հացի արտադրությունում:

Այսպիսով, առկա է անհամապատասխանություն՝ հիմնադրամի կանոնադրության 2.2 կետով սահմանված հիմնադրամի գործունեության հիմնական նպատակների և հիմնադրամի հիմնական գործունեության արդյունքների հետ:

Նաև հարկ է նշել, որ հոգաբարձուների խորհրդի կողմից սահմանված չէ, թե ինչ միջոցներով կատարված աշխատանքները կարող են համարվել կանոնադրական խնդիրների իրականացում: Մասնավորապես ՔԿԾ-ի հետ կնքված պայմանագրերի հիման վրա՝ ՔԿԾ-ի միջոցներով կատարված աշխատանքները կարող են հանդիսանալ քրեակատարողական ծառայության սոցիալական ոլորտի զարգացման, քրեակատարողական հիմնարկների տնտեսական և կենցաղային պայմանների զարգացման, քրեակատարողական ծառայության աշխատողների մասնագիտական ու դատապարտյալների կրթական մակարդակի բարձրացման կանոնադրական խնդիրների իրականացում, թե դրանք պետք է իրականացվեն հիմնադրամի միջոցների հաշվին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ

կառավարության որոշումներով անահատույց օգտագործման իրավունքով գույք /շենքեր, շինություններ, հողամասեր և այլ շարժական գույք/ է տրամադրվել հիմնադրամին իր կանոնադրական խնդիրները իրականացնելու նպատակով:

Հաշվեքնության օբյեկտի արձագանքը՝

Ընդհանրապես, բովանդակային և էական վերլուծական ուսումնասիրության պարագայում ակնհայտ է, որ հիմնադրամից «մեկ անձից» ընթացակարգով գնում կատարելու իրավասությունն ամրագրվել է ապահովելու համար հիմնադրամի կողմից ձեռնարկատիրական գործունեության սրեղծած արդյունքի սպառումն առավել հեշտացնելը՝ քանի որ առանց ձեռնարկատիրական գործունեության իրականացման հիմնադրամը չի կարող ֆինանսական միջոցներ ունենալ դատապարտյալներին զբաղվածությամբ (այլ ոչ պարտադիր կերպով վարձաքովով աշխատանքով, որը ամենևին նույնը չէ) ապահովելու համար՝ հատկապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիմնադրամը պետական ֆինանսավորում չի ստանում: Իրականում, հիմնադրամի ձեռնարկատիրական գործունեությունից ստացված ֆինանսական միջոցները պետք է և օգտագործվում են դատապարտյալներին տարատեսակ գործունեության մեջ ներգրավելու համար՝ ապահովելու համար թե նրանց աշխատանքային զբաղվածությունը, թե հնարավոր դեպքերում ապահովելու նրանց վարձու աշխատանք: Այսինքն հիմնադրամին ձեռնարկատիրական գործունեության տրված իրավունքն ու «մեկ անձից» ընթացակարգով գնման կատարման իրավասությունն ամրագրվել են համապատասխան ֆինանսական միջոցների գոյացման, այլ ոչ ուղղակիորեն դատապարտյալների զբաղվածության ապահովման համար, ինչն առավել լայն հասկացություն է և պարտադիր չէ, որ լինի միայն վարձու աշխատանքի ապահովման տեսքով՝ հետագայում նման աշխատանքի արդյունքի վաճառքի պարտադիր պայմանով:

Տեղեկացնում ենք նաև, որ 2018թ. հաշվետվության բացակայությամբ պայմանավորված, այն հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատվել է 2020թ-ին՝ 2019թ. հաշվետվության հետ մեկտեղ:

Հիմնադրամի կանոնադրության 2-րդ մասով սահմանվում են հիմնադրամի գործունեության առարկան, նպատակներն ու տեսակները, իսկ 3-րդ մասի 3.5-րդ կետով սահմանվում են հիմնադրամին օգնություն ցուցաբերող անձանց, այդ թվում հիմնադիրների, իրավունքները: Նշված չէ որևէ հղում, համաձայն որի հոգաբարձուների խորհրդի կողմից պետք է սահմանվի, թե ինչ միջոցներով կատարված աշխատանքները կարող են համարվել կանոնադրական խնդիրների իրականացում:

Հաշվեքննողների մեկնաբանությունը՝

Հարկ է նշել, որ «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով սահմանվել է հիմնադրամի ստեղծման հիմնական նպատակները, որը արդեն հստակ սահմանված է հիմնադրամի կանոնադրությամբ:

Հետևաբար հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիմնադրամը ստեղծվել է կոնկրետ նպատակների իրականացման համար, հիմնադրամի հաշվետվությունը պետք է իր մեջ պարունակի հիմնադրամի ստեղծման հիմնական նպատակներից յուրաքանչյուրի մասով կատարված աշխատանքների հստակ նկարագրությունը՝ նշելով կոնկրետ արժեքային և քանակական ցուցանիշներ՝ ինչը հստակ ներկայացված չէր հիմնադրամի կողմից ներկայացված հաշվետվության էլեկտրոնային տարբերակում: Իսկ ինչ վերաբերվում է այն խնդրին, թե հիմնադրամի հիմնական նպատակների իրականացումը ինչ միջոցներով պետք է իրականացվեր, ապա <<ՔԿԾ-ի միջոցներով պայմանագրային հիմունքներով կատարված աշխատանքները, բացի դատապարտյալներին աշխատանքով ապահովելու նպատակը, արդյոք կարող են դիտարկվել հիմնական նպատակների իրականացում, թե ոչ>> դատողության համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության որոշումներով անհատույց օգտագործման իրավունքով գույք /շենքեր, շինություններ, հողամասեր և այլ շարժական գույք/ է տրամադրվել հիմնադրամին իր կանոնադրական խնդիրները իրականացնելու նպատակով:

Հաստիքացուցակի վերաբերյալ

Հիմնադրամի կանոնադրության համաձայն՝ Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և նրանից դուրս կարող է ստեղծել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև՝ հիմնարկներ, որոնք գործում են Հիմնադրամի անունից՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված կանոնադրություններին համապատասխան: Հիմնադրամի խորհրդի իրավասությանն է պատկանում նաև Հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատումը: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2015 թվականի փետրվարի 27-ի որոշմամբ հաստատվել է հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը և հաստիքացուցակը, որի համաձայն սահմանվել է 135 հաստիք, որից՝ փաստացի աշխատողներ՝ 56, նախատեսված՝ 53, սեզոնային՝ 26: Նշված որոշմամբ սահմանվել է նաև աշխատավարձի ամսական դրույքաչափերը: Հաստիքացուցակում նշված մասնաճյուղերը 11-ն են՝ «Սևան» մասնաճյուղ, «Աբովյան» մասնաճյուղ, «Էրեբունի» մասնաճյուղ, «Նուբարաշեն»

[ՀՀ ՀԱՇՎԵՔՆՈՂ ՊԱԼԱՏԻ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ](#)

մասնաճյուղ, «Արմավիր» մասնաճյուղ, «Կոշ» մասնաճյուղ, «Արթիկ» մասնաճյուղ, «Ախուրյան» մասնաճյուղ, «Վանաձոր» մասնաճյուղ, «Մեղրի» մասնաճյուղ, «Գորիս» Մասնաճյուղ: Այնուհետև, Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2018 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ հաստատվել է Հիմնադրամի նոր վարչակազմակերպական կառուցվածքը և հաստիքացուցակը, համաձայն որի՝ հաստիքային միավորների աշխատակիցների ընդհանուր թվաքանակը կազմել է 49 մարդ, որից՝ վարչակազմ՝ 7, մասնաճյուղեր՝ 42: Ընդ որում՝ հաստիքացուցակում նշված մասնաճյուղերը 6-ն են՝ «Սևան» մասնաճյուղ, «Աբովյան» մասնաճյուղ, «Նուբարաշենի և Վարդաշենի» մասնաճյուղ, «Արթիկ» մասնաճյուղ, «Վանաձոր» մասնաճյուղ, «Մեղրի» մասնաճյուղ: «Աբովյան» մասնաճյուղում գործել խոզաբուծարան և կարի արտադրամաս, «Նուբարաշենի և Վարդաշենի» մասնաճյուղում՝ հացի արտադրամաս և խանութ-կրպակ, «Արթիկ մասնաճյուղում՝ հացի արտադրամաս և խանութ-կրպակ, «Վանաձոր» մասնաճյուղում՝ հացի արտադրամաս և խանութ-կրպակ, «Սևան» մասնաճյուղում՝ հացի արտադրամաս և խանութ-կրպակ, «Մեղրի» մասնաճյուղում՝ նռան այգիներ, «Գորիս» Մասնաճյուղում՝ հացի արտադրամաս, «Արմավիր» մասնաճյուղում՝ խանութ-կրպակ, հուշանվերների խանութ-տաղավար՝ Բ. Երևան, Խանջյան փողոցում: Տվյալ պարագայում պետք է նշել, որ Հիմնադրամի կողմից փաստացի մի շարք դեպքերում հաշվի չի առնվել հոգաբարձուների խորհրդի հաստատած հաստիքացուցակով սահմանված հաստիքային միավորների սահմանաչափը և նախատեսված աշխատավարձերը: Օրինակ՝ հաստիքացուցակով Հիմնադրամի Նուբարաշենի մասնաճյուղում սահմանված է հացթուփի և վարորդ-առաքիչի համապատասխանաբար 3 և 1 հաստիքային միավոր, սակայն մասնաճյուղը գործել է նշված հաստիքների մեկական միավորներով ավելի, իսկ Արթիկի մասնաճյուղում գործել է հաստիքացուցակով չնախատեսված վարորդ-առաքիչի հաստիք: Առկա է դեպք, երբ աշխատավարձը վճարվել է հաստիքացուցակով սահմանված աշխատավարձի չափի շեղումով: Օրինակ Նուբարաշենի մասնաճյուղի խմորիունց Ռ.Ս-ին 2018 թվականին 4 ամիս /8,9,10 և 11 ամիսներ/ վճարվել է 133.827 հազ. դրամ աշխատավարձ, այն պարագայում, երբ հաստիքացուցակով տվյալ հաստիքի համար աշխատավարձը սահմանվել է 110.0 հազ. դրամ:

Հիմնադրամի գործունեության վերահսկողությունը և հրապարակայնությունը

Հիմնադրամը ստեղծվել է ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 888 որոշմամբ, որով էլ հաստատվել է հիմնադրամի կանոնադրությունը: Նշված կանոնադրության 6-րդ բաժնի /Հիմնական գործունեության վերահսկումը/ 35-րդ կետի համաձայն՝ հիմնադրամի գործունեության ստուգումները կատարվում են անկախ աուդիտորների կողմից՝ առնվազն յուրաքանչյուր տարին մեկ անգամ,

37-րդ կետի համաձայն՝ աուդիտորներն ընտրվում են մրցութային կարգով և հաստատվում խորհրդի կողմից:

Կանոնադրությունը նոր խմբագրությամբ գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Սպանդարյանի տարածքային բաժնի կողմից 26.12.2016թ., որի համար հիմք է հանդիսացել հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2008 թվականի մարտի 13-ին, 2015 թվականի ապրիլի 20-ին և 2015 թվականին մայիսի 18-ին կայացված որոշումներով փոփոխությունները: Հատկանշական է, որ նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրության մեջ չի ընդգրկվել ՀՀ կառավարության վերը նշված որոշմամբ «Հիմնական գործունեության վերահսկումը» բաժնով սահմանված պարտադիր արտաքին աուդիտ անցկացնելու պահանջը: Ընդամենը նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրության 47-րդ կետի /հիմնադրամի խորհրդի իրավասությունները/ 16-րդ ենթակետով որպես խորհրդի իրավասություն սահմանված է հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի /աուդիտորի/ ընտրությունը, մինչդեռ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված կանոնադրությամբ աուդիտորի ընտրությունը պետք է կատարվեր մրցութային կարգով:

«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի /Հիմնադրամում գործունեության հրապարակայնությունը/ համաձայն՝ հիմնադրամը յուրաքանչյուր տարի հաշվետու տարվան հաջորդող հուլիսի 1-ից ոչ ուշ՝ հիմնադրամների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված համակարգում պարտավոր է հրապարակել՝

Կետ 1՝

Հաշվետվություն իր գործունեության մասին, որը պետք է պարունակի տեղեկություններ իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված դրամական միջոցների ընդհանուր չափի և դրանցում կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափի, հիմնադրի, հոգաբարձուների խորհրդի անդամների, կառավարչի անուններն ու ազգանունները, եթե նրանք օգտվել են հիմնադրամի միջոցներից և ծառայություններից հաշվետու տարվա ընթացքում, ինչպես նաև հիմնադրամի աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը:

Կետ 3՝

Հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության համաձայն՝ պատրաստված ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը, եթե հաշվետու տարվա վերջի դրությամբ հիմնադրամի ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 10 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը:

[ՀՀ ՀԱՇՎԵՔՆԵՐՉ ՊԱԼԱՏԻ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ](#)

Միևնույն ժամանակ գործող կանոնադրության 1.7 կետի համաձայն՝ Հիմնադրամը պարտավոր է յուրաքանչյուր տարի օրենքով սահմանված կարգով հաշվետվություն հրապարակել իր գործունեության մասին: **Սակայն հիմնադրամում 2018 թվականի գործունեության աուդիտ չի անցկացվել և գործունեության մասին հաշվետվություն չի հրապարակվել:**

Առկա է անհամապատասխանություն՝ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի, հիմնադրամի կանոնադրության 1.7 կետով սահմանված պահանջների հետ:

«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամում հարուցված քրեական գործի նախաքննությունն իրականացնում է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում /հիմք՝ ՀԿԳ ավագ քննիչի 30.10.2019թ. առգրավում կատարելու մասին որոշումը/: Նշված որոշմամբ հիմնադրամից առգրավվել է 2016-2018թթ. հիմնադրամի աշխատակիցների անձնական գործերը, աշխատանքային պայմանագրերը, համաձայնագրերը, հրամանագրերը, աշխատակիցների աշխատաժամերի հաշվառման և աշխատավարձերի հաշվարկման տեղեկագրերը, աշխատավարձի ցուցանիշները, վճարային տեղեկագրերը, հիմնադրամի և ՀՀ ԱՆ ՔԿԾ-ի միջև կնքված հացի մատակարարման պայմանագրերը, Հիմնադրամի և ՀՀ ԱՆ ՔԿԾ-ի միջև կնքված հանդերձանքի և անկողնային պարագաների մատակարարման պայմանագիրը, հիմնադրամի և ՀՀ ԱՆ ՔԿԾ-ի միջև 2017 թվականի տարեվերջին կնքված տարատեսակ ապրանքների մատակարարման պայմանագրերը, հիմնադրամի և ՀՀ ԱՆ ՔԿԾ-ի միջև կնքված շինարարական աշխատանքների կատարման՝ «Սևան» ՔԿՀ-ի արտաքին պատի կառուցման պայմանագիրը, հիմնադրամի կողմից իրականացված ձեռնարկատիրական գործունեության այլ ոլորտների, հիմնադրամի և «Նոնենի» ՍՊԸ-ի միջև կնքված՝ առանց իրավաբանական անձ հիմնելու համատեղ ձեռնարկատիրական գործունեության պայմանագիրը, հիմնադրամի և «Առագաս» ՍՊԸ-ի միջև կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը, ՔԿՀ-ների հարակից տարածքներում գտնվող՝ հիմնադրամին պատկանող խանութներում իրականացված մանրածախ առևտրի և կոմիսիայի պայմանագրերը, հիշյալ պայմանագրերին առնչվող հաշվապահական հաշվառման ամբողջ փաստաթղթերը, հիմնադրամի բանկային քաղվածքները, հիմնադրամի կողմից իրականացված այգեգործության և անասնապահության ոլորտին վերաբերող հաշվապահական հաշվառման ամբողջ փաստաթղթերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ստուգումն իրականացվել է հիմնադրամում առկա փաստաթղթերի և հնարավոր հասանելի այլ տեղեկատվության հիման վրա:

6. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

1. Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ առկա են դեպքեր, երբ Քրեակատարողական ծառայության համակարգի թվով 16 քաղաքացիական հատուկ ծառայողներ, պայմանագրային կամ վարձու աշխատողներ աշխատել են նաև այլ կազմակերպություններում /թվով 25/: Ուսումնասիրության ընթացքում ընտրանքային կարգով հարցում է կատարվել այդ կազմակերպություններին նրանց աշխատանքային ռեժիմի և կատարված գործառույթների վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով: Թեև տվյալ դեպքում օրենսդրությամբ որևէ սահմանափակում չկա, սակայն մեկից ավելի կազմակերպություններում աշխատելու պարագայում կարող է աշխատաժամանակների որոշակի համընկնումների ռիսկ առաջանալ:

«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամ

Հիմնադրամի գրասենյակի աշխատողների վերաբերյալ, որոնք միաժամանակ աշխատել են նաև այլ կազմակերպություններում

ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի տվյալների հիման վրա կատարվել է ուսումնասիրություն՝ հիմնադրամի գրասենյակի աշխատողների մասով՝ հաշվետու ժամանակաշրջանում միաժամանակ այլ կազմակերպություններում աշխատելու վերաբերյալ: Արդյունքում պարզվեց, որ առկա են դեպքեր, երբ հիմնադրամի գրասենյակի թվով 8 աշխատակիցներ աշխատել են նաև թվով 11 այլ կազմակերպություններում: Թեև տվյալ դեպքում օրենսդրությամբ որևէ սահմանափակում չկա հիմնադրամի աշխատակիցների մասով այլ կազմակերպություններում աշխատելու վերաբերյալ, սակայն մեկից ավելի կազմակերպություններում աշխատելու պարագայում կարող են աշխատաժամանակների որոշակի համընկնումների ռիսկեր առաջանալ:

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քրեակատարողական ծառայությանը.

1. Գործուն միջոցներ ձեռնարկել Քրեակատարողական ծառայության համակարգում աշխատող քրեակատարողական ծառայողների և քաղաքացիական հատուկ ծառայողների կողմից <<Քրեակատարողական ծառայության մասին>> ՀՀ օրենքի /հաշվետու ժամանակաշրջանին գործող ինկորպորացիա/ 32 հոդվածի 1.1 մասով և օրենքի 51.19 հոդվածով սահմանված սահմանափակումները չպահպանելու հանգամանքները:
2. Հաշվի առնելով <<Քրեակատարողական ծառայության մասին>> ՀՀ օրենքի /հաշվետու ժամանակաշրջանին գործող ինկորպորացիա/ 32 հոդվածի 1.1 մասով և օրենքի 51.19 հոդվածով սահմանված սահմանափակումների մասով 21.01.2020 թվականին ուժը կորցրած լինելու հանգամանքը, ինչպես նաև այն, որ քրեակատարողական ծառայությունում ծառայողների մասով անհամատեղելիության պահանջները գործող օրենսդրությամբ սահմանված է <<Հանրային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, առաջարկվում է պարզել ներկայումս քրեակատարողական ծառայությունում ծառայողների մասով, այդ թվում նաև մեր կողմից արձանագրված փաստերի մասով, այլ վճարովի աշխատանքներ կատարելու փաստերի համապատասխանությունը նշված հոդվածի պահանջներին, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել հետագայում նշված դեպքերը բացառելու ուղղությամբ:
3. Միջոցներ ձեռնարկել պայմանագրային և վարձու աշխատողների մասով այլ վճարովի աշխատանքներ կատարելու պարագաներում աշխատաժամանակի որոշակի համընկնումների դեպքերը պարզելու և բացառելու նպատակով:
4. Միջոցներ ձեռնարկել արձանագրված աշխատակիցների մասով ՀՀ տարածքը սահմանահատելու պարագայում՝ աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի համաձայն աշխատանքի մեջ գտնվելու և վարձատրվելու դեպքերի հանգամանքները պարզելու և հետագայում դրանց բացառելու նպատակով:
5. Միջոցներ ձեռնարկել Քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալներին տրամադրվող սննդի չափաքանակները ՀՀ կառավարության 15.10.2015թ. N1182-Ն որոշման 1.1 և 1.4 կետերի հավելված 1-ով և հավելված 4-ով սահմանված սննդի օրական նվազագույն չափաբաժինների հետ համապատասխանեցնելու նպատակով:
6. Հանգամանորեն ուսումնասիրել ՀՀ ԱՆ ՔԿՎ-ի և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի միջև կնքված պայմանագրով սահմանված 11 քրեակատարողական

հիմնարկներում էներգախնայողության ցուցանիշներից շեղումների պատճառները, առավելապես հաշվի առնելով մի շարք քրեակատարողական հիմնարկներում ծախսերը սահմանված ցուցանիշներից էական չափերով գերազանցելու փաստերը:

<<ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻՆ>>

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՍՈՎ

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

1. Քննարկել հիմնադրամի տարեկան հաշվետվության մեջ հիմնադրամի հիմնական նպատակներից յուրաքանչյուրի մասով կատարված աշխատանքները հստակ ներառելու հարցերը՝ նշելով արժեքային և քանակական ցուցանիշները:
2. Քննարկել հիմնադրամի գործունեությունը հիմնական նպատակներին համապատասխանության չափանիշներ սահմանելու հարցերը՝ հիմնադրամի գործունեությանը առավել ճշգրիտ և օբյեկտիվ գնահատական տալու նպատակով:
3. Միջոցներ ձեռնարկել, <<Հիմնադրամների մասին>> ՀՀ օրենքի և հիմնադրամի կանոնադրությամբ սահմանված լիազորությունների շրջանակներում, հիմնադրամում պարբերաբար աուդիտ անցկացնելու ուղղությամբ՝ հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունների արժանահավատությունն պարզելու նպատակով:

«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամին

1. Քրեակատարողական ծառայության հետ կնքվող պայմանագրերով սահմանված ապրանքների մատակարարման գործընթացը իրականացնելիս խստորեն պահպանել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 23.4 կետի 17-րդ տողով սահմանված պահանջների կատարումը:
2. Միջոցներ ձեռնարկել որպեսզի հիմնադրամի գործունեությունը հստակ համապատասխանի «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով սահմանված հիմնադրամի ստեղծման և Հիմնադրամի կանոնադրության 2.2 կետով սահմանված հիմնադրամի գործունեության նպատակների հետ:

3. Միջոցներ ձեռնարկել հիմնադրամին անհատույց և օգտագործման իրավունքով տրամադրված պետական գույքը՝ այդ թվում անշարժ գույքը, նպատակային և առավել արդյունավետ օգտագործելու ուղղությամբ:

4. Միջոցներ ձեռնարկել ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով հիմնադրամի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունը հրապարակելու, համապատասխան ժամկետներում աուդիտ անցկացնելու, ինչպես նաև սահմանված ժամկետներում և դեպքերում ակտիվների և պարտավորությունների գույքագրում անցկացնելու ուղղությամբ:

Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա մշակել և հաստատել միջոցառումների/գործողությունների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանում/ներ և միջոցառման կատարման իրատեսական ու ողջամիտ ժամանակացույց:

Քրեակատարողական վարչության և Հայաստանի վերականգնվող էներգիայի և էներգախնայողության հիմնադրամի հետ կնքված պայմանագրերի վերաբերյալ												Հավելված 1		
	Հիմնարկի անվանում	պայմ. Ամսաթիվ	էներգախնայողության ներդրումների գումար /հազ. դրամ/	էներգետիկ ծառ. մատուցման վճար /հազ. դրամ/	Ընդհանուր պայմ. Գումար / հազ. դրամ/	2018թ. տարեկան վճարվող գումար	Շին. Աշխ. կատարող ընկերություն	ԷԽՄ առաջ /կվտ/ *	ԷԽՄ հետո /կվտ/	Տարբե ռություն /%/	Վճարման ժամանակացույցի սկիզբ /ամսաթիվ/	Վճարման ժամանակացույցի ավարտ /ամսաթիվ/	2018թ. Էլ. էներգ. ծախս /կվտ/	2018թ. ԷԽՄ արդյունավետության %-ը
1	Նուբարաշեն	09.07.15թ	466,244.1	47,110.1	513,354.2	54,881.3	Ռեդիներտ ՓԲԸ	1,900,000	560,422	70.5%	01.17թ.	12.2025թ	1,709,874	10%
2	Աբովյան	09.07.15թ	221,500.0	22,380.7	243,880.7	27,045.7	Գևորգյան և Ներսիսյան ՍՊԸ	1,262,000	521,679	58.66%	02.17թ.	12.2025թ	404,961	68%
3	Արթիկ	09.07.15թ	74,558.9	7,033.1	81,592.0	9,451.1	«Արաման Սթոուն Սթայլ» ՍՊԸ	2,039,973	1,485,951	27.2%	02.17թ.	12.2025թ	1,095,403	46%
4	Դատ. Հիվ.	09.07.15թ	229,000.0	20,276.0	249,276.0	26,334.5	Ռեդիներտ ՓԲԸ	1,229,860	614,009	50.1%	01.17թ.	12.2025թ	753,320	39%
5	Էրեբունի	09.07.15թ	190,392.3	15,010.6	205,402.9	24,285.8	Մաղ շինանյութ ՍՊԸ	1,140,000	461,423	59.5%	05.17թ.	12.2025թ	115,978	90%
6	Վարդաշեն	09.07.15թ	110,300.0	8,387.4	118,687.4	12,578.5	Բիդեք ՓԲԸ	594,810	235,147	60.1%	11.16թ.	12.2025թ	483,840	19%
7	Վանաձոր	09.07.15թ	88,612.3	8,953.5	97,565.9	11,069.9	«Մեկուսիչ ԱԿ Բիգ Էներգո ՍՊ ՀՁԳ	834,709	488,268	41.4%	02.17թ.	12.2025թ	453,328	46%
8	Կոշ	09.07.15թ	333,948.0	29,568.3	363,516.3	38,476.1	Ռեդիներտ ՓԲԸ	1,659,770	572,890	65.5%	01.17թ.	12.2025թ	1,027,882	38%
9	Հրազդան	09.07.15թ	47,822.4	5,518.1	53,340.5	5,289.0	Երկնաքեր ՍՊԸ	589,486	366,681	38.0%	06.16թ.	12.2025թ.	438,800	26%
10	Սևան	16.10.15թ.	316,545.5	24,155.2	340,700.7	37,062.8	Ռեդիներտ ՓԲԸ	2,002,859	1,055,214	47%	02.17թ.	12.2025թ	1,592,975	20%
11	Արմավիր	16.10.16թ	179,510.0	11,406.4	190,916.4	39,978.4	Ռեդիներտ ՓԲԸ	3,031,193	1,948,748	35.7%	01.18թ.	12.2022թ.	991,033	67%
	ԸՆԴԱՄԵՆԸ		2,258,434	199,800	2,458,233	286,453		16,284,660	8,310,432	49.0%			9,067,394	44.3%
• ԷԽՄ- Էներգախնայողության միջոցառումներ														

2018 թ. -ի ընթացքում քրեակատարողական ծառայությունում խմելու ջրի ծախսերը մ ³					Հավելված 2
Հ/Հ	ՔԿՀ անվանումը		դատ. տարեկան միջին թիվ/մ ³	1 դատ. տարեկան միջին ծախս մ ³	1 դատ. օրական միջին ծախս Լ
1	Սևան	դատ. թիվ	312.8	87.5	240
		խ/մ	27,359		
2	Կոշ	դատ. թիվ	252.0	136.1	373
		խ/մ	34,289		
3	Արթիկ	դատ. թիվ	267.8	247.2	677
		խ/մ	66,199		
4	Աբովյան	դատ. թիվ	105.0	429.5	1,177
		խ/մ	45,100		
5	Դատապ. հիվանդ.	դատ. թիվ	136.6	795.5	2,179
		խ/մ	108,647		
6	Նուբարաշեն	դատ. թիվ	719.7	101.6	278
		խ/մ	73,121		
7	Վանաձոր	դատ. թիվ	180.7	82.2	225
		խ/մ	14,844		
8	Գորիս	դատ. թիվ	83.9	65.2	179
		խ/մ	5,468		
9	Վարդաշեն	դատ. թիվ	175.8	249.9	685
		խ/մ	43,949		
10	Հրազդան	դատ. թիվ	190.8	134.7	369
		խ/մ	25,692		
11	Արմավիր	դատ. թիվ	668.8	46.7	128
		խ/մ	31,260		
12	ՔԿԾ	խ/մ	6,980		
13	Էրեբունի	խ/մ	5,546		
Ընդամենը		խ/մ	488,454	156.2	427.8
*	1 դատապարտյալի և կալանավորի 1 օրվա ջրի ծախսի նորմա՝ 180լ				
**	1 դատապարտյալի և կալանավորի 1 տարա ջրի ծախսի նորմա՝ 0.18*365=65.7մ ³				